

վալումների մեջ ձգտում են կլանել, ձուլել, իրենց ենթարկել փոքրաքանակ ազգերին, կամ ոչնչացնել նրանց գոյության ու զարգացման ինքնությունը: Այս նույն հենքի վրա նորովի է հանդես գալիս աշխարհաքաղաքացիությունը: Նման պայմաններում, հատկապես փյունքի առկայության ու հայրենիքից հայտության վերջին արսագաղթի հետեւանքներով, ազգի ու ազգայինի պահպանումը մնում է ռազմավարական գերխնդիր: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ արեւմուտքի գաղափարախոսության մեջ տարածված համընդհանրությունը (ունիվերսալիզմը) «դավանում է նախադասական մարդասիրություն, միջնդեռ որեւէ ազգայինը եւ մշակույթին պատկանելու աշխարհաքաղաքացու վերացական մարդասիրություն, միջնդեռ որեւէ ազգայինը եւ մշակույթին պատկանելու գիտակցությունը մարդուն ստիպում է դավանել անմիջական կեցության մեջ իրական բարոյական արժեքները»:¹

Մարդու անմիջական կեցության մեջ տրված ազգայինը, դրան համապատասխանող արժեքային համակարգը, դրանց գիտակցությունն եղել ու մնում է սեփական ինքնության պահպանման, աշխարհաքաղաքացիության ու քաղաքակրթական օտարամոլ երեւոյթներին հակադրվելու կարեւոր միջոց:

САРГСЯН С. А. — Концепция “Человек-цивилизация” в армянской философии XIX века. В армянской философии XIX века человек и человеческое воспринимались как основные ценностные критерии, посредством которых армянские мыслители исследовали и оценивали положительные и отрицательные явления буржуазной цивилизации. С точки зрения национальной идеологии и идеала М. Налбандян, М. Мамурян, Гр. Арцруни, Ст. Паласян, Р. Перерян и др. утверждали, что истинная цивилизация должна отражать национальные задачи и проблемы, должна быть направлена на сохранение, развитие и упрочение в армянине общечеловеческого и национального начал.

ՀԱՅ ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ (1866-1900 թթ.)

Ար. Վ. ՍԱՅԱՐՅԱՆ

1866 թ-ին Լազարյան ճեմարանը իր տպարանը վաճառեց Անատոլի Մամոնտովին և դրանով հայերեն հրատարակությունների լույսընծայումն այստեղ դադարեց¹:

Հաջորդ տասնամյակներին, ընդհուպ մինչև 1991 թվականին Սկրաիչ Բարխուդարյանի տպարանի հիմնումը հայերեն լեզվով կամ Հայաստանին առնչվող հրատարակությունները լույս էին տեսնում այլազգիների տպարաններից: Թեոդիկի աշխատության Մոսկվային վերաբերվող բաժնում թվարկված են այդ շրջանին վերաբերող հայերեն գրքեր տպագրած հետևյալ տպագրիչները՝ Վաղենար Գոթիկ, Օթոն Հերբեկ, Վարվառե Գատցուկ և Կուդրյավցևա²: Թեոդիկն ինքն էլ խոստովանել է, որ այդ օտարազգիների տպարաններից լույս տեսած հրատարակությունների մասին մեր գնահատմամբ կցկտուր տեղեկությունների հիմնական մասը պարզապես վերցված է Լեոյի «Հայ գրքի տոմը» աշխատությունից: Այլ հարց է, թե ինչու է Թեոդիկի ձեռքի տակ եղած մասնավորապես Մոսկվային և ընդհանրապես Ռուսաստանին վերաբերող նյութը այդքան անստույգ և կցկտուր³:

Հայաստանի խոշորագույն գրադարաններում մեր մամրագին պրպտումները գալիս են հաստատելու, որ 1850-1865 թ.թ. գրահրատարակչական վերընթացից հետո, մինչև 1878 թ. հայերեն գրքերի տպագրությունը Մոսկվայում կրել է դիպվածային բնույթ: Այսուհանդերձ մեզ հետաքրքրել են տեղեկություններ Թեոդիկի թվարկած այլազգի տպագրիչների մասին: Մոսկվայի Հանրային գրադարանի Գրքի թանգարանում մենք քաղել ենք որոշ տվյալներ վերոհիշյալ տպագրիչների մասին: 1883 թվականին «Կառավարական տեղեկատվություն» հայտնում է, որ գրահրատարակչական գործունեությամբ Մոսկվայում զբաղվել են պրոստահայատակ Օթոն Հերբեկը և իր կինը՝ Ելենան, որոնց անունով ձևակերպված մեկական տպարաններ են գործել Տվերսկայա մասի 2-րդ և 3-րդ հատվածներում⁴: Թեոդիկի հիշատակած «Օր. Կուդրյավցևայի» տպարանը իրականում կրել է «Նախկին Կուդրյավցևայան» ֆիրմային անունը և պատկանելիս է եղել պետական խորհրդական Գուդվիլովիչի կնոջը⁵: Թե ինչու են այդտեղ տպագրվել բազմաթիվ հայերեն գրքեր, բացատրում է այն պարզ հանգամանքը, որ թե՛ Օթոն Հերբեկի, թե՛ Ելենա Գուդվիլովիչի տպարանները գտնվել են Լազարյան ճեմարանի հարևանությամբ: Ինչ վերաբերում է Վաղենար Գոթիկին, ապա նա ֆրանսահայատակ էր, դեռևս քառասնական թվականների վերջին հաստատվել էր Մոսկվայում, Կաթողիկե միսիոներ Ավգուստ Մեմենից ձեռք էր բերել հայերեն տառատեսակներ և Լազարյան ճեմարանի վարչության և մանկավարժների հետ կապերի շնորհիվ հատկապես 1850-1859 թվականների ընթացքում կարողացել էր տպագրել Լազարյան ճեմարանի դասախոսների և շրջանավարանների, ինչպես նաև Մոսկվայի Համալսարանի հայագի ուսանողների համարյա բոլոր աշխատությունները, որոնց հրատարակությունը ֆինանսավորել են ոչ թե Լազարյանները, այլ որևէ այլ աղբյուր: Հատկապես տևական համագործակցություն է եղել Վ. Գոթիկի և հայր ու որդի Մսերյանների միջև: Զարմաք Մսերյանը, մասնավորապես ընդհուպ մինչև 1875 թվականը այդտեղ է տպագրել իր աշխատությունները:

Մոսկովյան տպարանների հայերեն հրատարակությունները ժամանակակիցների շրջանում հայտնի են եղել նախևառաջ իրենց տպագրական կատարման բարձր որակով: Դրանք պարզապես շարժել են Կովկասի հայ տպագրիչների նախանձը: Մրա ապացույցներից Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակչական ընկերության 1881 թվականին ընդունված որոշումն է հատկապես Մոսկվայում տպագրելու «Գամառ Քաթիպայի բանաստեղծությունը» ժողովածուն: Այսպես էր հիմնավորվում այդ ձեռնարկը ընկերության խմբագրական մասնաձուղովն իր հաշվետվության մեջ. «Ընկերության բոլոր հրատարակություններս վարչությունս տպագրում է Թիֆլիսում: Միայն Գամառ-Քաթիպայի բանաստեղծությանց գիրքը վարչությունս որոշեց տպագրել Մոսկվայում, որովհետև Թիֆլիսի տպարաններն անձեռնահաս կգտնվեին ցանկացածի պես մաքուր և գեղեցիկ տպել: Այդ գրքի տպագրության հոգսը սիրով հանձն առավ Մոսկվայի ընկերության աշխատակից անդամ պ. Գրիքոր Խալաթյանը (Լազարյան ճեմարանի հայոց պատմության պրոֆեսոր-Ա.Ս.) Գամառ Քաթիպայի բանաստեղծությանց գրքի տպագրությունը արդեն սկսված է 3600 օրինակով և այս տարվա մայիսին բոլորովին պատրաստ կլինի ի լույս ընծայելու համար: Պ. Խալաթյանի մոտավորապես հաշվից երևում է, որ այդ գրքի տպագրությունը, հեղինակի պատկերը և ճանապարհի ծախսը կմատի ընկերությանը մինչև 700 ռուբլի, բացի 300 ռուբլուց, որ նշա-

¹ Տե՛ս Ա. Վ. Սաֆարյան. Հայ գրահրատարակչական գործը Մոսկվայի Լազարյան ճեմարանում. Պատմաքաղաքագիտական հանդես. Երևան. 1988, N 4 (123), էջ 224-229:

² Թեոդիկ. Տիպ և տառ. Կ. Պոլիս, 1912. էջ 180-181:

³ Թեոդիկի այդ բաժնում թվարկված բոլոր հրատարակությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թվարկվածները պարզապես նրան հայտնի հրատարակություններն են: Հայտնի է, որ 19-րդ դարի երկրորդ կեսում, իսկ հատկապես 1878 թ-ից հետո հայերեն հրատարակությունների ներմուծումը Ռուսաստանից Օսմանյան կայսրություն խիստ սահմանափակվել է: Ուշագրավ է, որ Թեոդիկը չի թվարկել այստեղ լույս տեսած պատմական, ուսումնական և քաղաքականորեն որոշ աչքի ընկա-

⁴ Список типографиям, литографиям и металлографиям, N 30-31. См. "Правительственный Вестник" NN206-209, СІІТ. 1883 г.

⁵ Նույն տեղում, N 39:

¹ Գեորգյան Հ., Ազգ. ազգային պատմություն, ազգային մշակույթ, Երևան, 1997, էջ 52:

նակված է բազմաշխատ հեղինակին իբրև վարձատրություն⁶»։ Այս ժողովածուն հակառակ իր հսկա տպագրական լայն տարածում ունեցավ այնպես, որ 12-14 տարի անց անհրաժեշտություն առաջացավ երկրորդ և երրորդ հրատարակությունները անելու։ Պրոֆ. Գ.Խալաթյանը դրանք այս անգամ իրականացրեց Ս. Պետերբուրգում⁷։ Լիբերմանի տպարանում, մույնքան բարձր տպագրական որակով։

1877-78 թվականների ռուս-թուրքական պատերազմը հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման վրա ազդեցություն ունեցած վառլային իրադարձություններից էր։ Արևմտյան Հայաստանի մի սովորական գրավումը ռուսական զորքերի կողմից, Սան-Ստեֆանոյի համաձայնագրի 16-րդ և Բեռլինի վեհաժողովի 61-րդ - հոդվածների ծնած հույսը, պատերազմի արդյունքում բալկանյան քրիստոնյա ժողովուրդների ձեռք բերած անկախության ստեղծած նախադեպերը խառնվեցին արևելահայ միտքը։

Լեոն հիշում էր. «Եթե կար մի նպաստավոր հանգամանք, որ հովանավորում էր հայոց հարցի առաջին 3-4 խանձարուրային տարիները, այդ այն համեմատական ազատությունն էր, որ գոյություն ուներ ոչ միայն Ռուսաստանում, այլև Թուրքիայում: Հայոց մամուլը Կ. Պոլսում և Ջնյունիայում ազատ քննում էր հայ ժողովրդի անտանելի դրությունը ասիական զավառներում և պաշտպանում էր 61-րդ հոդվածը: Իսկ Ռուսաստանի մասին ավելորդ է խոսքն անգամ: Այստեղի հայության համար բյուրքահայերի հարցը դարձել էր սեփական հարց, ամենաբարձր նվիրական ստացվածք, որ հետ էր մղել բոլոր մյուս հարցերը և լայն ժողովրդականություն էր ստացել բոլոր խավերի մեջ:

1879-80 թվականներին սով էր Թուրքաց Հայաստանում: Առաջին անգամ էր, որ այս առիթով հայ ժողովրդի մեջ երևան էր գալիս հասարակական ինքնօգնության լայն կազմակերպում: Կ. Պոլսում կազմված Մովսիս չանձնաժողովը դրված էր եվրոպական դեսպանների հովանավորության տակ: Ռուսաստանի բոլոր հայաբնակ անկյուններում ժողովրդաբարություն էր կատարվում և առաջին անգամ հանդես էր գալիս մոր ժամանակների մեծ ուժը – խոշոր գումարներ կազմված ժողովրդական կուպեկներից: Սովալլուկ բուրբահայր՝ առաջին անգամ էր իր բազմադարյան կյանքի մեջ օգնություն ստանում դրսի աշխարհից:

Հայկական հարցի հարուցած անօրինակ հասարակական շարժումների հայտարար նշաններ էին չորս տարվա խռրոկ կուլտուրական նվաճումները, դպրոցական վերակազմություն, քաարոն, ուսմացած գրականություն, մամուլ, հրատարակչական և բարեխիղական հիմնարկություններ:

Եվ հանկարծ այս ամբողջ կենդանությունը կանգ էր առնում, խամրում էր: 1881-ից հետո սաստկացած ռուսական խավար ռեակցիան եղբայրանում է Թուրքիայում գլուխ բարձրացրած սուլթանական ռեակցիայի հետ: Եվ այս եղբայրացման առաջին զոհերից մեկը դառնում է հայությունը»:

Թե որքանով էր վերոհիշյալ մթնոլորտը իրական և թե ի՞նչ չափով էին նորահույս հայրենասիրական գաղափարները տիրում ռուսահայերի մտքին, ցույց է տալիս մոսկվաբնակ Հակոբ քահանա Սուրենյանցի «Ալեքսանդր Է» գրքի նախաբանում բերված մտորումները. «Ռուսաստանի հայը վայելելով Պետության օրենքի հովանավորության ներքո ազգային, կրոնական և մարդկային ազատություն, զարգանում է լուսավորության և ամեն բարեմասնությունների մեջ, մանավանդ Ալեքսանդր I Կայսեր քսանհինգ տարվա արված բարենորոգությունների շնորհիվ: Նա յուր այս խաղաղ և զոհ վիճակումը միմիայն վշտով ու մտատանջությամբ է տառապում, աչքի առաջ տեսնելով և լսելով յուր համագրի եղբայրների սուզնապը Օսմանյան երկրում:

Մանավանդ Սլավոնական պատերազմից (1877-78 թ.թ. ռուս-թուրքական պատերազմը - Ա.Ս.) սկսյալ մինչև ցայսօր դա մի օրինական ծանր խնդիր է դարձել հայ մարդու համար:

Արդար Եվրոպայի բարոյական ազատության ոգին այս դարոտ երկրորդ կեսում սկսավ մասնավորապես ներշնչել և Օսմանյան պետության մեջ և կարճ ժամանակ հայր՝ նորա ամեն հպատակներից ավելի բարձր դրության և բարեխախտության մեջ էր գտնվում: Նա պետության հպատակների մեջ իբրև միակ զարգացյալ տարր, ստացավ Օսմանյան Սուլթանից սահմանադրական իրավունք և կանոնադրություններ: Այդ վարչությանը հանձնվեցավ խնամք տանել հայ ազգի բարոյական, մասնավորապես և նյութական պիտույից վերա ...:

Մահմանադրությունը մի այնպիսի անսովոր երևույթ էր Օսմանյան Պատրիարքի մեջ, մանավանդ այն ժամանակ, որ հայ ազգի տրախտրոյանը չափ չկար: Մահմանադրական հայը յուր այդ բարձր դրությունից մինչև անգամ Օսմանյան երկրից դուրս բնակվող հային թշվառության մեջ ընկնոված էր տեսնում ...:

Մասնաճառությունը անցյալ քսան տարիների միջոցում անտարակույս ոչ սակավ օգնեց հային առաջադիմությամբ և զարգացմամբ, բայց ցավոք սրտի պետք է, սակայն՝ քանի տեսակ հանգամանքներ արգելափակե-ղան շատ զեղեցիկ հույսերի իրագործման:

... Օսմանյան Պետության մանավանդ Հայաստանի այլ և այլ օտար, վայրենաբարո գեղերի անգուստ կրոնամոլությունը և կեղեքիչ բնավորությունը ևս առավել վերջին տարիներումս, իբրև պատերազմի հետևանք համարյա իսպառ խափանեցին Սահմանդրության գործադրությունը»։ Այնուհետև նկարագրելով քուրդ և լեռնա- յին ցեղերի վայրագությունները Արևմտյան Հայաստանում և 1877-1878 թ.-ը պատերազմի հետևանքները, հեղինակը եզրակացնում էր. «Կարծես կիսալուսինը անցյալ պատերազմների մեջ Ռուսիո խաչակիր զորքի առաջ կո- րագուտիս լինելու և կրած թշվառությանց վրեժը մի միայն քրիստոնյա հայերից է հանում։ Փոքր Ասիո հայը անհ- նարին աղետից մեջ ընկած.- սրտ, սովք, հրո և մահվան խաղալիք դարձած հարստահարության, զրկանաց և լլկանաց մատուցած մասամբ յուր հողից հալածված և մասամբ նորա վերա վերջին ճգնաժամին հասած՝ յուր ազ- գային մանավանդ թե մարդկային իրավունքը վերականգնելու հմար գրություն է խնդրում։

Ալեքսանդր Բ կայսեր թագավորության պատմությունը, թող գրավական լինի հայ ազգին, որ այս Աստծո օրհնյալ թագավորը, որի մեջ անձնավորված է մարդասիրություն և կարեկցություն, պիտի լսե յուր հպատակ Հայ ազգի ձայնը և պիտի կենդանացնե նորա վշտալի արենակից եղբայրների հույսը- պիտի պահանջե Օսմանյան Սուլթանից Սան-Ստեֆանոյի դաշինքի¹⁶ հողվածի համաձայն, «Հայաստանի պարտադիր բարենորոգություն և պաշտպանություն դրացի ցեղերի բռնությունից և հարստահարությունից»: Պիտի շուտով ձայն տա Եվրոպային պաշտպանություն դրացի ցեղերի բռնությունից և հարստահարությունից: «Անհապաղ կատարումը և ամնիջական Բեռլինի վեհաժողովի 61 հոդվածի խտտացյալ բարենորոգությանց «Անհապաղ կատարումը և ամնիջական հսկողությունը»⁸»: Կարծում ենք չարժե վերլուծել Հակոբ քահ. Սուրենյանցի հայացքները՝ դրանք գնահատելու ի-հսկողությունը»⁸»: Կարծում ենք չարժե վերլուծել Հակոբ քահ. Սուրենյանցի հայացքները՝ դրանք գնահատելու ի-մասսով: Պարզ է նաև, որ այստեղ էլ յուրաքանչյուր սող գրված է գրաքննության պահանջների հանգամանքը նկատի ունենալով:

Չենք կարող սակայն չարձագանքել, որ այս մտածողությունը համարժեքորեն արտահայտում էր այն տարիների ռուսահայ հասարակության հիմնական մասի վերաբերմունքը ռուս-թուրքական պատերազմի հոտևանքներին:

«Լեռնիի» յալ տրամադրությունները մի կողմից, յոթանասուներեք թվականների վաղից աշխատանքային քաղաքական կյանքի ազդեցությունը մյուս կողմից պայմանավորեցին այն վերընթացը, որն ապրեց Մոսկվայի

[illegible]

Մոսավորապես 1883 թ.-ին է վերագրվում խմբամասի միջանկյալ ազդեցության հարցը։ Այնուհետև Վ. Պարսամյանին հաջողվել է գտնել Մոսկվայի պատմական պետական արխիվի ուստիկանական դեպարտամենտի գործերում։ Այն 1883 թ. մարտի 9-ի N62 կից գրությամբ Մոսկվա է ուղարկել Երևանի նահանգի ժանդարմական վարչության պետ Ֆյոդորովը։ Կոչը հայտնաբերվել է Երևանում հրատարակվող «Պասկ» թերթի խմբամական վարչության պետ Ֆյոդորովը։ Կոչը հայտնաբերվել է Երևանում հրատարակվող «Պասկ» թերթի խմբամական վարչության պետ Ֆյոդորովը։ Կոչի կարևորությունը նկատի ունեցիր Վասակ Պապաջանյանի մոտ կատարած խոգարկության ժամանակ։ Կոչի կարևորությունը նկատի ունեցավ Ռեքում եմբ ամբողջությամբ։

«Պիտի գոռան պիտ կրկնեն
Անդադար ազատություն»

Հայերն

[illegible]

6 «Финля», 1881, №4:

⁷ Լեո. Անցյալից. հուշեր, քրքեր, դատումներ. Թիֆլիս, 1925, էջ 40:

⁸ Ա.Բ. Յ. Սարգենեանց, Ալեքսանդր Բ Կալար Ռուսիո. - 1855-1880: Մակուս, 1880 էջ XI-XIV: 101

Այժմյան Թուրքիայում տիրում է անհիշխանություն, այնտեղ չկա ոչ մի սկզբունք, որը անհրաժեշտ է փոքր ի շատ բարեկարգ պետության համար, չենք տեսնում մի որևէ կապ և համերաշխություն այդ երկրում բնակվող ազգությունների մեջ, որոնք ընդհակառակը միմյանց թշնամիներ են համարվում: Հոգևորի մեջ գտնվող կառավարությունը բոլորովին գտրվ է իր հպատակ ժողովրդի դրությունը ապահովելու ընդունակությունից, թե քաղաքացիներ և թե տնտեսապես: Այդ ժողովրդին հարստահարում են, նրան գրկում են, անպատվում են, հափշտակում են, սրի և կրակի են տալիս նրա ունեցածը և բռնաբարում են նրա հարազատներին, կուտարությունից գրկում, նա ոչ մի դատարանում չէ կարողանում գտնել արդար դատաստանը այդ անիրավությունների դեմ, որովհետև այդ անիրավությունների մասնակից են իրանք կառավարողները: Մի՞թե այս տերությունն է: Տերություն ասելով, մենք հասկանում ենք մի երկիր, որտեղ բոլոր ժողովուրդները ինչ ազգից և կրոնից էլ բաղկացած լինեն, բոլորը միասին կազմում են մի ամբողջություն, միմյանց հետ սերտ կապված լինելով ազատ և հավասար իրավունքներով, իսկ կառավարությունը ներկայացնում է ոչ այլ ինչ, եթե ոչ մի մարմին, որը պարտավոր է պահպանել այդ ժողովրդի խաղաղությունը, հոգավ նրա պետքերը, տարածել ուսում, արվեստներ և ծաղկացնել երկրի արդյունաբերությունը, մի խոսքով նպաստել այդ երկրի առաջադիմությանը և բարօրությանը: Սակայն սրա նշույլն անգամ չենք տեսնում Թուրքիայում: Ուրեմն այսպիսի մի պետություն վաղ թե ուշ պետք է անհետանա, որովհետև, կրկնում ենք, նա անընդունակ է կառավարելու, կապ և համերաշխություն պահպանելու այնքան բազմաթիվ ազգությունների մեջ, որոնցից բաղկանում է Թուրքիայի ժողովուրդը: Թուրքիայի քայքայումը արդեն սկսված է և նա օրեցօր ավելի ու ավելի թուլանում է և փռքանում: շատ ժամանակ չէ անցնել, երբ Բալկանյան թերակղզում սլավոնական ազգերը և հույները ազատագրեցին Թուրքիայից իրանց հողերը, որոնց անհրաժեշտ է ձեռք տիրացել էր, բացի այդ, նշանավոր իրողություն է, որ Թուրքիան կորցրել է իր նշանակությունը հպատակ մահմեդական ցեղերի աչքի մահմաչում սուլթանի գերիշխանական իրավունքները: Հայ երիտասարդներ, ժամանակը և հանգամանքների դրությունը մեզ հաջողություն են գուշակում և մեզ հարկավոր է օր առաջ պատրաստություն տեսնել, որպեսզի Թուրքիայում այդքան հաճախ կրկնվող բարեպատեն հանգամանքները առանց օգտավետ հետևանքի չալցնեն մեզ համար: Մեզ հարկավոր է մտնել ժողովրդի մեջ: Հայաստանցուն հասկացնել նրա իրավունքները, ցույց տալ անարդարության դեմ կռվելու եղանակներն ու միջոցները և այդ վսեմ գաղափարը իրագործելու ժամանակը. օգնել նրան ամենայն կերպով և անձնվիրաբար: Հայ երիտասարդներ, հայրենիքի փրկությունը ձեռնառնելով պետք է լինի, ազատության դրոշակ բարձրացնելը ձեռք է նախառնահանված, ձեր պարտականությունն է առաջնորդող հանդիսանալ այդ սուրբ գործում: Հարստահարված և վերին աստիճանի հուսահատության հասցրած ժողովուրդը միայն ոգևորիչ և բարձր առաջնորդող ուժերի է սպասում: Դուք եք ազատության այդ վսեմ գաղափարի առաքյալները, դուք եք կռված այդ գաղափարով ժողովուրդը կրթելու, պատրաստելու ...

Մի ուրիշ անգամ մենք կխոսենք այն միջոցների մասին, որոնք անհրաժեշտ են գործ դնելու Հայաստանի ազատության գործերին նվիրված գործիչներին:

ՀԱՎԵԼՎԱԾ

Մեզ այս գրությունը հրապարակելու միջոցին հեռագիրը հաղորդեց Թուրքիայի արևելյան ծայրից, Հայաստանի սրտում գտնվող Կարինից, մի շատ աղետալի գոտում, գոտում ... Ոմանց ասելով դա մի տեսակ ապստամբություն է, ապերախտ հայերի կողմից իրանց բարերար Թուրքիայի դեմ: Այո, դա ապստամբություն է, բայց բռնակալության և անիրավության դեմ, դա կենդանի ժողովրդի կենդանի բողոքն է, որով նա պահանջում է մարտում են ցույց տալ, որ այդ կայծակի արագությամբ տարածված լուրը չափազանցացրած է և չունի որևէ քաղաքական նշանակություն. նրանց ասելով կալանավորված են մի քանի մարդիկ, այն էլ չարագործներ: Այնինչ, ասելով է: Ահա, որպիսի դրության մեջ են գտնվում Հայաստանի վաստակավորները: Գիշա աղբյուրներից տեղեկանում ենք, որ նոցա մեծ մասը ժողովրդի հասարակ և արհեստավոր դասին են պատկանում: Նրանք այժմ մութ բանտերի մեջ, իսկ նրանց հացի կարոտ ընտանիքը իրանց սառը խրճիթներում աշխատում են և քաղում մեր հայ մատնիչների մեղքերը: Հայեր, մեր սուրբ պարտականությունն է ամենից առաջ քայքայված և նյութական օգնության հասնել սակավաթիվ, բայց եռանդուն գործիչներին: Բանտարկվածների թշուառ ընտանիքները իրանց ազգակիցների շուտափույթ օգնությանն են սպասում. և արդարև այս ազգային ազատության գաղափարին իրանց զոհեցին: Ո՞ւմ խնամատարության են թողնում ընտանիքը, իրանց հարազատները, եթե ոչ նույն ազգի: Երկար մտածել չէ հարկավոր, սպասելու ժամանակ չէ. բոլոր հայերը պարտավոր են, առանց ժամանակ կորցնելու, ստորագրություն բանալ Հայաստանի ազատության առաջին զոհերի և նրանց ընտանյաց հաճար:

«Միություն հայրենասերների»

Նույն խորատիպ եղանակով (հեկտոգրաֆի վրա) 1884 թ. «Հայրենասերների միությունը» հրատարակում է «Ազատության ավետաբեր» թերթը: Ըստ պրոֆ. Վ. Պարսամյանի, ընամենը լույս է տեսնում թերթի 4 համար¹⁰:

⁹ ЦГИАМ, ДП-3, 1883 г., д. 172, л. л. 1-4

Թերթից իմանում ենք, որ այն տպագրվել է «Հայրենասերների միության ազատ տպարանում»: «Ազատության ավետաբերի» խմբագրակազմը այսպես է բացատրել իր հրատարակության նպատակները. «Հայրենասերների միության պատգամներից մեկն է ազգերի համերաշխությունը, «Մենք հավասարաչափ հարգում ենք յուրաքանչյուր ազգի լեզուն, կրոնը և անկախությունը, եթե միայն նա չի ձգտում հարստահարել ուրիշներին, արգելք չի դնում ուրիշների կանոնավոր զարգացման վրա ... Ժողովրդի ազատության հիմնաքարն է նրա տնտեսական անկախությունը: Ուստի «Հայրենասերների միությունն» աշխատելու է, որ երկիրը, հողը իր բնական հարստություններով և աշխատանքի գործիքները դառնան աշխատավորների, բանվորների սեփականություն: Երբ Հայաստանի աշխատող, արդյունաբերող ուժերը՝ երկրագործը, արհեստավորը, մշակը, տնտեսապես հարստահարվելու են - «Հ.Մ.»-ուրթյան ոչ մի քաղաքական ազատություն միտք և նշանակություն չունի: «Հ.Մ.»-թյանն առելի են թե՛ քյուրդ ասպատակող շեյխը, թե՛ քյուրդ ճնշող սլաշտոնյան և թե՛ հայ հարստահարողները: Մենք թշնամի ենք ներկա անձնական բաժան-բաժան կազմակերպության, որտեղ տկարն անօգնական է, իսկ ուժերը՝ հարստահարող և անօգուտ: Մենք քարոզում ենք ընկերական միաբանություն, որտեղ ընհանուրը հոգում է յուրաքանչյուրի համար, իսկ յուրաքանչյուրը՝ ընդհանուրի համար: Միայն թե ինչու բոլոր մասնավոր կալվածատերերի և պետության ձեռքի հողերը պետք է անցնեն համայնքների ձեռքը: Համայնքը միակ սեփականատերն է, միակ սպառողն է՝ որովհետև նա միակ աշխատող, արդյունաբերողն է: Միևնույն ժամանակ համայնքները ներկայացնում են այն սկզբնական քաղաքական տարրերը, որոնցից պետք է կազմվի ընդհանուր քաղաքական բանակցություն՝ ֆեդերացիա¹¹»:

«Հայրենասերների միության» մեջ ընգրկված են եղել Մոսկվայի և Պետերբուրգի բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներ: Ներսես Աբելյանը Մոսկվայի բարձրագույն տեխնիկական դպրոցի ունկնդիր էր, Թամարա Աղամյանը՝ Ս. Պետերբուրգի Բժշատիկական կանանց բարձրագույն դասընթացների ուսանողուհի: Միությանը անդամակցում էին Մոսկվայի գյուղատնտեսական ակադեմիայի և Մոսկվայի համալսարանի ուսանողներ: Արշ. Արշարունին անհրաժեշտ է համարել իր աշխատության մեջ անդրադառնալ նաև Բաքվում լույս տեսած «Գործ» ամսագրի 1917 թ. N1 -ում տպագրված «Հուշեր իմ անցյալից» ակնարկին, որը ստորագրված է «Անկախ»: Հեղինակը այսպես է նկարագրել «Հայրենասերների միության» և «Ազատության ավետաբերի» գործունեությունը. «Մի օր էլ համալսարանում մոտեցավ ինձ Սրապիոն Տեր-Գրիգորյան ուսանողը, որ ինձնից ավելի բարձր կուրսի իրավաբան ուսանող էր և սկսեց ինձ ծանոթացնել մի ինչ-որ գաղտնի «Հայրենասիրաց Միության» հետ: Նա առաջարկեց ինձ այդ «կուսակցության» թերթը, որի վերնագիրը կարծես՝ «Ազատության ավետաբեր» էր: Բայց կուրսերի մի քանի հայ ուսանողներից կազմված այդ խումբը, ինչպես ինձ շատ հետո հավատացնում էին տեղյակ անձինք, գաղտնի ոստիկանության աջակցությամբ ձեռք էր բերել տպարան և սկսել այդ հրատարակությունը ...

Հը, ինչպե՞ս էք համարում թերթը, - ասաց իր սովորական մեղմ ժպիտով, հանդիպելով ինձ մի քանի օր անց հիշածս ուսանողը:

Ոչինչ բան է, անհիմն խակմիտ ձեռնարկություն ... - ասացի ես, վերադարձնելով նրան թերթը ...

Այնուհետև «Հայրենասիրաց Միության» և նրա «Ազատության ավետաբերի» մասին ես ոչինչ չլսեցի, ոչ էլ հետաքրքրվեցի¹²:

Խորհրդային շրջանի ուսումնասիրողները՝ Ա. Արշարունին, Վ. Պարսամյանը, Ս. Ներսիսյանը վճռականորեն համաձայն չեն եղել «Անկախի» վերոհիշյալ գնահատականներին և ամեն կերպ աշխատել են լուսաբանել խմբակի նարդոնիկական ուղղվածությունն ու հեղափոխական-անլեզալ բնույթը:

Մեզ համար էլ դժվար է մերժել կամ համաձայնվել միությանը վերաբերող այդ գնահատականներին: Իրողությունն այն է, որ կազմակերպության առնվազն մեկ անդամի՝ Թամարա Աղամյանի հանդեպ գաղտնի ոստիկանությունը հետապնդում և հալածանքներ է իրագործել Թիֆլիսում կանանց խմբակներում նարդոնիկական արմատական ելույթների համար: Նույնիսկ արգելվել է նրա հետագա ուսումնառությունը Ս. Պետերբուրգում¹³: Կազմակերպության այլ ղեկավարների և անդամների հետապնդման մասին տվյալներ չկան: Ավելացնենք, որ կազմակերպության ղեկավար Ներսես Աբելյանը բարձրագույն տեխնիկական դպրոցն ավարտելուց հետո տեղավորվել է Թիֆլիս, մինչև 1888 թվականը թղթակցել է «Արձագանք» և «Չակավկազակոյե օրգանիզմին» թերթերին, իսկ այնուհետև քաղաքականությամբ չի զբաղվել (վախճանվել է Թբիլիսիում 1933 թ.-ին):

1880 թ.-ին Լազարյան ճեմարանի և Մոսկվայի համալսարանի մի խումբ հայ ուսանողներ հիմնում են «Մոսկվայի հայ ուսանողական գրականական ընկերությունը» Ժամանակակցի վկայությամբ «ուսանողական այս խումբը կազմակերպում էր հավաքույթներ, որտեղ զեկուցումներ էին կարդացվում հայ ուսանողների և ին-

¹⁰ Հավ. Պետրոսյանի կազմած «Հայ պարբերական մամուլի բիբլիոթեկա. մատենագիտական ցանկ»-ում (Երևան, 1956, էջ 473) բերված են տեղեկություններ թերթի մեկ համարի մասին: Այդ համարը լույս է տեսել 1884 թ. փետրվարին: Մ. Բաբույանի կազմած «Հայ պարբերական մամուլը» համահավաք մատենագիտական ցուցակում (Երևան, 1986) անդրաշ նշումներ կան թերթի 1883-1884 թ.թ. լույս տեսած լինելու և 8 էջանոց «մի քանի համարի» մասին (էջ 41, N 165): Արշ. Արշարունյանը հայտնի է եղել թերթի միայն մեկ համար, որն էլ վերբերվել է, Մոսկվայի Հայ մամուլը (էջ 151-153) և «Մոսկվայի համալսարանը և հայ ուսուցիչներ ինտելիգենցիան» (էջ 158-160) աշխատությունների մեջ: Երևանի մատենադարանում պահվում է թերթի չորս համար:

¹¹ Տե՛ս. Ս. Ներսիսյան. Նարայնիկական խմբակներն Անդրկովկասում. Երևան, 1940, էջ 22-23:

¹² Ա. Արշարունի, Մոսկվայի Համալսարանը և հայ ուսուցիչներ ինտելիգենցիան. Երևան, 1955, տես նաև «Գործ», Բաքու, 1917, N1, էջ 37:

¹³ Տե՛ս, Վ. Պարսամյան, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958 թ. էջ 259-260:

տեղից ենցիայի համար, մասնակցում էր հասարակական գործերին և մատչելի հրատարակություններ էր անում¹⁴»:

1884-87 թ.թ ընթացքում գրական ընկերությունը չորս մանկական գրքույկ է հրատարակում (բոլոր գրքույկները համարակալված), իսկ 1887 թ-ին՝ ընկերության քարտուղար, Մոսկվայի համալսարանի պատմափիլիսոփայական ֆակուլտետի ուսանող Հովհաննես Հովհաննիսյանի բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն:

1884 թ. լույս տեսած թ.1 հրատարակության՝ «Չորս առակներ մանուկների համար» 32 էջանոց գրքույկի խմբագրական ծանոթությունը ազդարարեց ընկերության հրատարակչական գործունեության մասին: «Այս փոքրիկ գրքույկի հրատարակությամբ մենք կամեցանք միայն երևան հանել Մ.Հ.Ռ.Գ.Ը. գոյությունը:

Հույս ունենք, որ այսուհետև մեր Գ.Ը. կարող պիտի լինի ավելի մեծ խնամքով և հոգացողությամբ լույս ածել հետագա տետրակները, որ նվիրում ենք հայ ընթերցող մանուկներին: Ուստի պարտք ենք համարում խնդրել հասարակության ներողամտությունը՝ ներկա տետրակի պակասությունների համար¹⁵»:

Նույն թվականին ընկերությունը հրատարակում է «Երկրորդ մանկական գիրք» երեք պատմվածքից բաղկացած ժողովածուն:

Ինչպես արդեն առիթ ունեցել ենք հիմնավորելու, մանկական գրականության տպագրությունը հետոնեֆորմյան Ռուսաստանում լուսավորության տարածման բազմաթիվ և բազմաճյուղ գործընթացի մի կարևոր մասն էր: Մանուկ ընթերցողին հասցեագրված գրականության հրատարակության անհրաժեշտությունը համակել էր ժամանակի խնդրին առնչվող մտավորականության ներկայացուցիչներին:

Գրական ընկերության այս նպատակը պետք է որ նպաստեր հասարակության շրջանում նրա հեղինակության աճին: Թիֆլիսում լույս տեսնող Սպանդար Սպանդարյանի «Նոր-Դար» թերթին ուղարկված նամակում (թվագրված՝ 20 փետրվարի 1885 թ.) Հովհաննես Հովհաննիսյանը տեղեկացնում էր, որ ինչպես անհատ նվիրատուների միջոցներով, այնպես էլ ընկերության հաշվին զգալի քանակությամբ N1 հրատարակության օրինակներ են առաքվել հայկական դպրոցներին: «Գրական ընկերությանը ուղարկել է ձիի հետևյալ տեղերի դպրոցներին՝ Երկու երկու օրինակ՝ Վաղարշապատ, Ջաքաթալա, Թելավ, Եղեսիա, Նոր Բայազետ, Իզդիր, Նուխի, Մղնախ, Ծուշի և Լազարյան ճեմարանի ակադեմիական գրադարանին: Խրիմու դպրոցներին՝ 25 օրինակ, բացի այս ուղարկվել է պ.պ. Աղայանցին և Ղուշյանցին Իրանց թեմերի դպրոցներին երկու երկու օրինակ նվիրելու, առաջինին 30 օրինակ, երկրորդին 22 օրինակ¹⁶»:

Գրական ընկերության N 3 հրատարակությունը «Ինչու՞ եմ ապրում մարդիկը» երկի հայերեն փոխադրությունն էր:

«Մեղու Հայաստանի» Թիֆլիսում լույս տեսնող թերթի N 41-ի «Մասնախառնություն» բաժնում Լև Տոլստոյի այդ վիպակի փոխադրության մասին հոդվածում Հայկունին խրախուսել էր ընկերության գործունեությունը, բայց միաժամանակ քննադատել գրքի քարզմանության լեզուն¹⁷:

Մա լուրջ խնդիր էր, որովհետև մտավորականության շրջանում ամենուրեք քննարկվում էին նոր գրական լեզվի ճանաչման հարցերը: Ընթանում էր գրական արևելահայերենի հղկման գործընթացը: Այս հանգամանքն էլ ստիպում է Հովհ. Հովհաննիսյանին, իբրև գրական ընկերության քարտուղար, հանդես գալու բացատրություններով: «Առան Լ. Տոլստոյի սույն աշխատությունը հայերենի փոխադրելով, Մոսկվայի Հայ ուսանողական գրականության ընկերությունը կամենում է թե մի փոքրիկ գաղափար տալ հայ հասարակության աշխարհահռչակ հեղինակի գրչի մասին և թե ընթերցանության մի ընտիր տետրակ նվիրել հայ մանուկներին ու ժողովրդին: ... Գրականական ընկերությունը կոմս Լ. Տոլստոյի աշխատությունը անունից փոխադրած է և ոչ քարզման, հետևյալ հանգամանքը աչքի առաջ ունենալով:

Տոլստոյի վկայիլը այնպիսի տեղական ինքնուրույն բնավորություն և առանձնահատկություններ ունի, որ նրա քարզմանությունը՝ Հայ մանկան և ռուս գյուղական կյանքին բնավ անտեղյակ հայ ժողովրդի հասկացողության գրեթե անմատչելի լինելով, բնականաբար բոլորովին պետք է հեռացներ ընթերցողի ուշադրությունը գրքույկի հիմնական գաղափարից, որ ավելի զին ունի և նշանակություն, քան կյանքի արտաքին նկարագիրը: Մինչդեռ փոխադրությունը բնագրի արժանավորությունը չնվազեցնելով հանդերձ՝ հայ ընթերցողին պետք է ներկայացնե մի կյանք՝ ուր ամենայն ինչ նրան ծանոթ է և ընտանի է և սրանով գրքույկի գլխավոր միտքն ու գաղափարը նրա համար ավելի հետաքրքրաշարժ պետք է լինի: ... Տոլստոյը յուր վկայի նյութը առել է ռուս գյուղական կյանքից և գրել է հասարակ դասի համար, նրա խոսակցության ոճին հարմարացնելով յուր լեզուն: Մենք ևս փոխադրելով նրա գրքույկը, նյութը առանք հայ գյուղական կյանքից, պահպանելով հեղինակի պատմության շարքը, և կամեցանք հրատարակել գլխավորապես մեր հասարակության այն մասի համար, որը թեպետ գրագետ է, բայց բան չունի կարդալու: Ուստի և մաքուր գրականական լեզվով գրելը ավելորդ հանարեցինք, որովհետև գրականական լեզուն ժողովրդին յուր անծանոթ ձևերով, անշուշտ, դարձյալ այսպես թե այնպես արգելք պետք է լինե գրքույկի հիմնական գաղափարը առանց դժվարության ըմբռնելուն, որը մենք փափագում ենք ... Մենք ընտ-

¹⁴ Թադ. Ավրադեզյան, Հովհաննես Հովհաննիսյան գրական-պատմական վերլուծություն. Երևան 1934, էջ 15:

¹⁵ Չորս առակներ մանուկների համար, Մոսկվա, 1884 թ.:

¹⁶ Հովհ. Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, հատոր 3, Երևան, 1965, էջ 27-28:

¹⁷ «Մեղու Հայաստանի», Թիֆլիսի, 1886, N41, էջ 4: Տե՛ս նաև Հովհ. Հովհաննիսյան, Երկերի ժողովածու հ.3, ծանոթագրություններ, էջ 551:

ընցինք երևանյան բարբառը, սրա համեմատաբար ավելի տարածված լինելու համար և փոքր ինչ գրական ձև տվինք թե՛ ուրիշ գավառների հայ բնակիչներին և թե՛ մանուկներին մատչելի անելու համար¹⁸»:

Մոսկվայի հայ ուսանողական գրականական ընկերության գլխավոր հրատարակությունը 1887 թ. լույս տեսած Հովհաննես Հովհաննիսյանի բանաստեղծությունների ժողովածուն էր, որն անմիջապես իր վրա հրավիրեց ազգային գրական - մտավորական շրջանակների ուշադրությունը: Այս հրատարակությունը Մոսկվայում մի ուշագրավ ավանդույթի սկիզբը դրվեց:

Հենց այստեղ առաջին անգամ լույս տեսան Հովհաննես Թումանյանի, Ալեքանդր Շատուրյանի, Վահան Տերյանի բանաստեղծությունների ժողովածուները:

Ահա թե ինչպես էր հիշում Մկրտիչ Բարխուդարյանը Հովհ. Հովհաննիսյանի բանաստեղծությունների այդ ժողովածուի հրատարակման պատմությունը: «Գրականական ընկերության դրամարկոմ համարյա ոչինչ չկար, իսկ գրքի տպագրությունը մի քանի հարյուր ռուբլի ծախք էր պահանջում: Պետք էր դիմել մասնավոր հանգանակության: Բայց որովհետև անհարմար է մեկի անվան շուրջ գործ սկսել առանց նրա զիտության և հավանության, ուստի ծածուկ հավաքվեցավ անհրաժեշտ գումարի մի մասը և ապա միայն որոշվեցավ հայտնել նրան մեր դիտավորությունը: Չեմ հիշում ճշմարիտ, թե ինչ տեղ էինք հավաքված այդ նպատակով, բայց զիտեմ, որ այնտեղ մենք նրան ոչինչ չասացինք և միայն կեցղիշերից անց, երբ Նեզդինի բուլվարով անցնում էինք և գնում Յվետոյ բուլվարի կողմը՝ որտեղ Հովհաննիսյանի բնակարանն էր, մեզինց մեկը հայտնեց նրան մեր որոշումը: Հազիվ հայտնողը վերջացրեց իր խոսքը, լավեց Հովհաննիսյանի կենդանությունը: Մեզանից մի քանիսը չհասկանցան այդ արտասուքի նշանակությունը և շշկվեցան, մյուսները հանգստացնելով տուն տարան:

Եվ Հովհաննիսյանը որպես շնորհակալություն, իր առաջին գրական փորձերը ընկերներին նվիրեց¹⁹»:

Մ.Հ.Ռ.Գ.Ը այս վերջին հրատարակությունը հայ մշակութային կյանքում մի արտակարգ իրադարձություն եղավ: Հայ մշակույթի մեծերը իրենց բարեհաճությունը հրապարակավ արտահայտեցին երիտասարդ տաղանդավոր բանաստեղծի նկատմամբ: Բաֆին, ով ընդհանրեց չորս օրինակ գիրք էր նվիր ուղարկել Մոսկվայում գտնվող հայ ակադեմիկոս մտավորականներին, մեկն իր մակագրությամբ նվիրել էր «Նոր բանաստեղծին»: Ռաֆայել Պատկանյանը գիրքը ստանալով՝ իր նկարն էր ուղարկել հետևյալ մակագրությամբ: «Ի՞նչան գար մացման երիտասարդ բանաստեղծին»: Հովհ. Հովհաննիսյանին իրենց համակրանքն արտահայտեցին Ղևոնդ Ալիշանը և Վազարոս Աղայանը: Մանուկ Աբեղյանը այսպես էր նշում գրքի քողած տպավորությունը. «Լուս էր և հայ մուսան. միայն Գամառ Քատիպան էր իր վերջին երգերը երգում: Հիշում եմ շատ անգամ հարցնում էին՝ հապա մենք բանաստեղծներ չպիտի՞ ունենանք, որ մեր ամենօրյա ցավը տա: - Բանաստեղծական շնորհից գուրկ ազգ ենք, - լինում էր պատասխանը: Եվ ահա 1887 թ. գարնան վերջում հրատարակվեց մի գրքույկ՝ Հովհ. Հովհաննիսյանի բանաստեղծությունները, թվով 69 մեծ ու փոքր ոտանավորներ, ինքնուրույն և քարզմանական: Ընդունելությունը շատ խանդավառ էր, ամենքն զգում էին, որ այս բանաստեղծը մի խոշոր նորություն է, որ նա գրում է ոչ մեծ մեծ միակ բանաստեղծ Գամառ-Քատիպային²⁰»:

Գնահատականների այս շարքը կարելի է ամփոփել Հովհ. Հովհաննիսյանի ստեղծագործության լավագույն գիտակ Նշան Մուրադյանի արտակարգ դիպուկ բնորոշմամբ. «Ծշմարիտ բախտավոր են նրանք, ովքեր գրականության մեջ մուտք են գործում միանգամից, առաջին իսկ գրքով, ոչ թե քարշ գալով նրա հետամուտքի մոտ, այլ հայարտ մտնելով ասես հենց նրանց համար կառուցված շրամուտքից: Հովհաննես Հովհաննիսյանի շունդալի մուտքը մեր գրականության մեջ իր նախադեպը չունի: Նրանից հետո միայն Իսահակյանը և Տերյանը կարող էին պարծենալ. թե իրենք էլ առաջին գրքույկներով են նվաճել կլասիկ կոչվելու իրավունքը ... Բազում պակասների մեջ երկուսը պարտադիր են այս դեպքում, հեղինակի տաղանդը և հասարակական պահանջին ճիշտ ժամանակին արձագանքելը²¹»:

Մ.Հ.Ռ.Գ.Ը. անդամների թիվն այնքան էլ մեծ չէր: Բացի Հովհ. Հովհաննիսյանից անդամներ էին Մ. Բարխուդարյանը, Մ. Մուրադյանը, Ա. Առույանը, Ս. Տեր-Գրիգորյանը (որը նաև «Հայրենասերների միության» հետ է կապված եղել):

Անհրաժեշտ է ընդգծել, որ ընկերության անդամներից երկուսի՝ Հովհաննես Հովհաննիսյանի և Մկրտիչ Բարխուդարյանի բարեկամությունն ու համագործակցությունը շոշափելի նշանակություն են ունեցել ինչպես հայ գրականության, այնպես էլ գրահրատարակչական գործի զարգացման մեջ: Դեմարանական և համալսարանական տարիներին էր արդեն, որ գծագրվեց երկու ընկերների կոչումը. մեկինը՝ բանաստեղծ, մյուսինը՝ գրահրատարակիչ:

Մկրտիչ Բարխուդարյանը ծնվել է 1862 թվականին Գողթան գավառի Ագուլիս փոքրիկ քաղաքում: Մովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում, որտեղ էլ մտերմացել է Հովհաննես Հովհաննիսյանի հետ: Մի առիթով գրած իր հիշողություններում նա այսպես է նկարագրել Դեմարանի տարիները. «... Գիտեմ, որ նրան (Հովհ. Հովհաննիսյանին -Ա.Ս.)» ուղարկում են Երևանի պրոգիմնազիան, ուր նա մնում է մինչև 1877 թ. աշունը, երբ այնտեղից էլ նրան Մոսկվա են ուղարկում, որտեղ նա մտնում է Լազարյան Դեմարանի երրորդ դասարանը: Ահա այդ ժամանակ է սկսվում ծանոթությունս նրա հետ, իսկ ապա՝ և մտերմությունս:

¹⁸ Հովհ. Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, հատոր 3, Երևան 1965, էջ 29-30:

¹⁹ Գ. Հովսեփյան, Հովհաննես Հովհաննիսյան, Երևան, 1957 թ., էջ 20:

²⁰ Նույն տեղում, էջ 22:

²¹ Նշան Մուրադյան, Հովհաննես Հովհաննիսյանի արվեստը, Երևան, 1964 թ. էջ 29:

... 70-ական թվականներին Լազարյան ճեմարանի գլուխ էին անցել Նիկողայոս Դելիանյանց (կոմս Նիկ. Դելյանով - Ա.Ս.) որպես վերատեսուչ և Գևորգ Բանանյանց՝ որպես տեսուչ: Երկուսն էլ ծագումով հայ, երկուսն էլ արտաքուստ իսկական հայ և այլ ոչինչ: Եթե առաջինի նկատմամբ, որ հայերեն խոսել չգիտեր, այլ միայն յուր անունն ու ազգանունը ստորագրել, իմ ասածը՝ զուտ ճշմարտություն է, ապա երկրորդի նկատմամբ, որ խոսել էլ գիտեր և գրել էլ, ճշմարտություն չէ այն չափով, ինչ չափով տարին մեկ անգամ «Շնորհավոր ծնունդ և մկրտումն», մի անգամ էլ «Քրիստոս յարեալ ի մեռելոց» հայերեն արտասանած խոսքերը կարող են մանուկներին հայ հոգիները նշել կամ զոհն իր նրանք իրենց հետ բերած հայությունը պահպանեն: Ի հարկե, չունեցած բանը ուրիշին տալ և ներշնչել չի կարելի²²:

Հակառակ այդ գործիչների Սկրտիչ Բարխուդարյանն ամենաջերմ զգագումներն է տածել դեպի ճեմարանական ուսուցիչները, հատկապես Մմբատ Շահազիզն ու տեր Հակոբ ավագ քահանա՝ Սուրենյանը²³:

Դեռևս աշակերտական տարիներին Մ. Բարխուդարյանը հետաքրքրվում է հրատարակչական գործի պատմությամբ: 1880 թ-ին նա ռուսերենից թարգմանում է «Յոհան Գուտենբերգ» գրքույքը տպագրության գյուտարարի մասին և մի մանակով Թիֆլիսի հայ հրատարակչական ընկերությանն առաջարկում է այն տպագրել: Միաժամանակ նա տեղեկացնում է, որ թարգմանությանը կցել է հայ տպագրության մասին մի տեղեկանք, որը վերցրել է Ալեքսանդր Խուդաբաշյանի «Обозрение армян» գրքից: Թիֆլիսի հայ հրատարակչական ընկերությունը անպատասխան է թողնում նրա առաջարկը²⁴:

1883-87 թվականներին Սկրտիչ Բարխուդարյանը Հովհ. Հովհաննիսյանի հետ մասին Մ.Հ.Ու. Գ. Ը. ամենագործունյա անդամներից մեկն էր և զբաղվում էր թե՛ գրքույկների տպագրության, թե՛ դրանց տարածման աշխատանքով: Նա էր իրականացնում ընկերության և տպարանատեր Օթոն Հերբեկի միջև կապը:

1887 թ-ին լինելով Մոսկվայի համալսարանի պատմա-գրական ֆակուլտետի ուսանող, նա ձեռնարկում է «Հանդես գրականական և պատմական» մատենաշարի տպագրության գործը:

1888 թ. զարմանք Օ. Հերբեկի տպարանից լույս տեսած «Հանդես գրականական և պատմական»-ի առաջին գրքի «Հրատարակչի կողմից» հոդվածում Մ. Բարխուդարյանը այսպես էր մեկնաբանում իր այս նախաձեռնության անհրաժեշտությունը. «Աչքի առաջ ունենալով ժամանակից ընթերցող հասարակության պահանջներին բավականություն տվող մի կարգավորյալ ամսագրի բացակայությունը, որ օրեցօր ավելի ու ավելի զգալի է դառնում, նույնպես ի նկատի առնելով այն հանգամանքը, որ մեր գրականական – քաղաքական թերթերը զբաղված են առօրյա կյանքի հարցերով և չեն կարողանում զոհն մասամբ լրացնել այդ թերությունը, թերևս և չեն կամենում, այդ ակնհերձ կերպով երևում է նորանից, որ հաճախակի նոքա խոյս են տալիս թե՛ ինքնուրույն և թե՛ թարգմանական ընդարձակ ու լուրջ գրվածքներից, որոնք ավելի համապատասխան են ամսագրի բովանդակության նյութ դառնալու, - մենք ապարդյուն չհամարեցինք ձեռնամուխ լինել «Հանդես գրականական և պատմական» ժողովածուի հրատարակության:

Անտարակույս, մի ժողովածու, որ ամենաշատը կարող է հրատարակվել տարին երկու անգամ, նույնպես չէ կարող լրիվ փոխարինել մի պարբերական ամսագրի հրատարակությունը և այդ շատ հասկանալի է: Մակայն քննի որ այն ունենալու բախտավորությունից զուրկ ենք, կարծում ենք, որ գլխավորապես գրականական բովանդակությամբ մի ժողովածու ներկայումս կարող է անմպաստ չլինել: Այդպես ենթադրելով, մենք ավելի ուշադրություն ենք դարձրել գրականական մասի վերա, գլխավոր և անհրաժեշտ տարր համարելով նորան: Նախ և առաջ զեղարվեստական գրվածքներն են ազնվացնում մեծամասնության սիրտն ու հոգին, զարգացնում և կրթում նորա միտքն ու ճաշակը: Այս ուղղությանն էլ պիտի հետևենք մեր հետևյալ հրատարակություններում: Ոչ միայն խոյս չենք տալիս, այլ և ըստ չափու կարողության կաշխատենք տալ մեր ընթերցողներին քննադատական, մատենախոսական, գիտության այս և այն ճյուղից մատչելի լեզվով գրված հոդվածներ: Եթե այս անգամ նշմարելի է այդ թերությունը, մեր պարտականությունն ենք համարում մյուս անգամ լրացնել և բազմակողմանի դարձնել «Հանդեսի» բովանդակությունը: Դիմում ենք այն հարգելի պարոններին, որոնք ունեն հիշատակության արժանի նյութեր, թող բարեհաճեն ուղարկել մեզ տպագրության համար: Դիմում ենք նույնպես և այն հարգելի հեղինակներին և երիտասարդ ուժերին, որոնք համակրում են այս հրատարակության, թող չխնայեն յուրանց աջակցությունը:

Այստեղ մեզ վրա պարտականություն կա խմբագրելու մեր հարգելի բաժանորդների ներողամտությունը, որ մեզանից անկախ պատճառներով, կրկնակի խոստումնազանց եղանք, - անկարող եղանք, յուր ժամանակին

²² Գ.ԱԹ. Մկրտիչ Բարխուդարյանի ֆոնդ, 599, ք. 12:

²³ Եթե Մմբատ Շահազիզի կյանքն ու գործունեությունը լավ ուսումնասիրված է և քաջ հայտնի, ապա Հակոբ ա. ք. Սուրենյանցի անձը ավելի միակ ճանաչված է:

Շմվել է Դրիմում: քահանա ձեռնադրվելուց հետո նշանակվել է Մոսկվայի հայոց եկեղեցիների հոգևոր հովիվ և ընտանիքով տեղափոխվել Մոսկվա: 70-ական թվականներից կրթում է դասավանդել Լազարյան ճեմարանում: Քահանայի որդին՝ Վարդգես Սուրենյանցը Հ. Հովհաննիսյանի և Մ. Բարխուդարյանի ձեռնարանական ընկերն է եղել, հետագա բարձրագույն կրթություն ստանալուց հետո հռչակավոր նկարիչ է դարձել: Հ.ա. ք. Սուրենյանցը նաև լայնօրինակ անձնավորություն է եղել և զբի մկրտյալ: 70-80-ական թվականներին տարբեր միջոցներով կարողացել է տպագրել իր մի քանի աշխատությունները: Նա հեղինակ է հետևյալ գրքերի. Հայրապետյան կենսագրությունը խաչի վերացման Մոսկվայի հայոց եկեղեցյան, Դոնի Ռոստով, Հովհ. Տեր-Արքանավանի տպարան, 1879: Ալեքսանդր Բ. Կոյսյո Ռոստով (որին անդրադարձել ենք վերևում): Երկար կյանք և նորա պայմանները Նուարթ բժշկապետի, Մոսկվա, տպ. Երև. Կյոռաբեռեթ, 1882: Կարողիկոսի ընտրությունը, խորհրդակցությունը և բաղձանք, Մոսկվա, Օ. Հերբեկի տպարան. 1883:

²⁴ Հ.Դ.ՊԱ. ֆոնդ 30. գործ 1. թերթ 32:

լույս ընծայել «Հանդեսի» առաջին գիրքը. տպարանական պայմաններ, հակառակ տպարանատիրոջից մեզ տված խոստման, խոչըրդոտ եղան գործին: Այս հանգամանքը ի նկատի ունենալով մենք դժվարանում ենք ժամանակ նշանակել, թե երբ լույս կտեսնե երկրորդ գիրքը, թեպետ մեր կողմից ամենայն ջանք գործ կդնենք, որ շատ չուշանա:

Առաջին գրքի հաջողությունը մեզ համար առեականաչա է, ընթերցողների համակրության, ուստի և երկրորդ գիրքը կիրատարակվի ավելի մեծ, ամսագիրների համար ընդունված դիրքով և բաղկացած կլինի 20-22 թերթից: Բացված է բաժանորդագրություն երկրորդ գրքի համար²⁵:

«Հանդեսի» առաջին գիրքը դեռ Պետերբուրգում էր գրաքննիչի թույլտվությունը ստանալու նպատակով, երբ Թիֆլիսի «Մշակում» լույս տեսավ Գրիգոր Արծրունու շատ բնորոշ ոչնչացնող ոճով մի հոդված - առաջնորդող «Յոված ուժերով գործելու հակումը» վերնագրով: Մի շարք պատճառներով (որոնց մասին կխոսենք ավելի ուշ) հետաքրքրական այս հոդվածը ուզում ենք ներկայացնել առանց կրճատումների: «Հայերը ամեն բանում հակում ունեն գործելու անմիաբան կերպով, ցրված ուժերով: Հային հասում է իր անձի և իր ընդունակությունների մասին անչափ մեծ կարծիք ունենալը: Հայը երբեք չգիտե հպատակվել, խոնարհվել ուրիշին, ավելի ընդունակին կամ փորձվածին, հայը զուրկ է ամեն տեսակի դիսցիպլինայից:

Հայը ոչ-մի գործում չգիտե, չի սիրում երկրորդական, փոքր ի շատե ստորադրյալ դեր խաղալ, այլ ամեն մեկը, ինչքան էլ անպատրաստ լինի, կամենում է անմիջապես առաջին դեր խաղալ: Հայը երբեք չի խոստովանի, թե ուրիշ հայ իրանից ավելի գիտե, ավելի ընդունակ է որևէ գործ կատարել, այլ հավատացած է, որ եթե ինքն ուզենա, միայն մի օրում կաջողեցնի այն բոլորը, իչնը որ իր նախորդները տարիների տոկոսն աշխատանքով հագլվ կարողացան աջողեցնել:

Երբ որ հայերի մեջ գոյություն ունի մի որևէ հայտատություն կամ ձեռնարկություն, լինի դա դպրոց, դպրոց, ամսագիր, թատրոն, գրադարան, ընթերցարան, ընկերություն և այլն. - հայը երբեք չի միանա արդեն եղած հիմնարկության կամ ձեռնարկության հետ, այլ անպատճառ կաշխատի նորը հիմնարկել, որպեսզի ինքն գլխավոր դերը խաղա և ոչ-թե երկրորդական, որ անկասկած պետք է խաղար, եթե միանալ հնի հետ ...:

Հայի այդ հակումը ցրված ուժերով գործելու, ամեն մի հայ անհատի այդ ձգտումը անպատճառ ուզենալ առաջին դեր խաղալու ամեն մի գործում՝ առաջ է բերում հայերի մեջ այն անմխիթար երևույթը, որ հայերը երբեք չեն խմբվում մի որևէ հաստատության չորս կողմ, այլ ամեն մի անհատ ուզում է անպատճառ ուրիշներից անկախ իր սեփական ձեռնարկությունը սկսել ...:

Այդ երևույթը նկատվում է մեր գրական գործունեության մեջ և տխրալին այն է, որ քանի զնում է՝ ավելի ու ավելի է նշմարվում և ընդհանրանում:

Մի հայ հիմնում է մի լրագիր, անմիջապես մի ուրիշ հայ հիմնում է մի այլ լրագիր: Պետերբուրգում սկսում է երևալ մի հայոց ամսագիր (խոսքը Մ. Գուլամիրյանի «Արաքս» հանդեսի մասին է Ա.Ս.), - անմիջապես Մոսկվայի հայերը ձեռնամուխ են լինում մի հայոց ամսագրի հրատարակության՝ Մոսկվայում, այնուհետև Թիֆլիսումն էլ մեկը սկսում է մի ամսագիր հրատարակել. Կ. Պոլսումն էլ և այլն ...:

Եվ ցավալին այն է, որ այդ բոլոր ձեռնարկողներից՝ ոչ մեկը փորձված չէ, պատրաստ չէ սրբիցիստական գործունեության՝ ոչ իր բնածին ձիրքերով, ոչ էլ այն բազմակողմանի հմտություններով, որ հատկապես անհրաժեշտ են հրապարակախոսական ասպարեզում որևէ, թեկուզ ամենաանձան հաջողություն ունենալու համար:

Եվ հետևանքը ի՞նչ է լինում. այն, որ մեզանում հրապարակական ամեն ասպարեզում սկսողներ շատ կան, բայց գործը շարունակողներ՝ շատ քիչ ...:

Նոր մոր գործեր շատ են սկսվում, մանավանդ գրական ասպարեզում, բայց սկսվածներից շատ քչերն են հաջողվում:

Բայց միևնույն ժամանակ մայեցեք յուրաքանչյուր սկսողի անձնավստահությանը ... Ամեն մեկը այնպես է խոսում, այնքան բաներ է խոստանում, ակնարկելով, թե մինչև այդ թույլն ոչ թե ոչինչ արած չէ, որ ակամա մարդ կարծում է, թե այդ նոր սկսողից պետք է վերջապես հիմք դրվի մի նոր դարազլիսին մայրենի գրականության մեջ:

Բայց չի անցնում մի քանի ամիս, կամ մի քանի շաբաթ, - և մեծ մեծ խոսքերով, մեծ մեծ խոստումներով, աննկարագրելի անձնավստահությամբ, անձնագովությամբ սկսած՝ գործը՝ կատարելապես անհետանում է, այլևս երբեք չերևալու համար ...:

Իսկ նրա տեղը փոխելի պես սկսում են բուսնել նոր նոր ձեռնարկություններ, նույնչափ անձնավստահությամբ և հանդգնությամբ ազգին խոստանալով նոր կյանք, նոր միտք, կրթիչ ազդեցություն, վերջապես մի նոր դարազլույս, - բայց նույնչափ մեռելածին, անկենդան լինելով, որչափ մախիլիները, որոնք և շուտով ուժասպառ լինելով, կարճ ժամանակամիջոցում մեռնում են իրանց բնական մահով²⁶:

Թողնեք այն հարցը, թե որքանով են ճիշտ կամ սխալ Գրիգոր Արծրունու տեսական դատողությունները: Տվյալ դեպքում կարևոր է պարզել, թե ինչն էր նա այդքան մեծ եռանդով «մեռելածին» և «անկենդան» որակում Մոսկվայում Մկրտիչ Բարխուդարյանի և քիչ ավելի շուտ Պետերբուրգում Միմեոն Գուլամիրյանի «Արաքս» պատկերազարդ հանդեսով սկսած այս ձեռնարկումները: Գոմե Մոսկվայի պարագայում նա պարզ տեսնում էր, որ համազգային գրական-մշակութային մի նոր կենտրոն է ստեղծվում, որ առնվազն «Մշակից» ու մշակական-

²⁵ «Հանդես գրականական և պատմական», Մոսկվա, գիրք 1, 1888, էջ 382-383:

²⁶ «Մշակ». 1888, մարտ 30, N 29, էջ 1:

ներից անկախ է: Գրիգոր Արծրունու կենսաժամանակում գործելակերպը ավել կամ պակաս չափով իմացողների համար պարզ էր, որ հենց դա էր տվյալ դեպքում նրա «ներշնչանքի» պատճառը:

Իսկ «Հանդեսի» գործը իսկապես դժվարությամբ էր առաջ գնում: Դժվարությամբ էին հավաքվում նյութերը, նման հրատարակությունը առաջին անգամը լինելով, խնդիր էր դրանք դասակարգելը, ժամանակ էր պահանջում Պետերբուրգում գտնվող գրաքննիչին նյութեր հանձնելն ու ստանալը, առաջվա նման դժվար էր տպագրության համար գումարներ հայթայթել: Այդ մասին էր Բարխուդարյանը գրում «Հանդեսի» երկրորդ համարում. «Թե որքան դժվար է այստեղ, Մոսկվայում, կանոնավորապես տարին երկու անգամ հրատարակել «Հանդեսը», քավական է, եթե հայտնենք ընթերցողին, որ անցյալ 1888 թ. դեկտեմբերին սկսած տպագրությունը միայն այժմ ենք կարողանում լույս ընծայել՝ հակառակ մեր ցանկության և տված խոստման: Ներկա 1889 թ. «Հանդեսի» երրորդ գիրքը չի կաշտ լույս տեսնել, քանի որ հանգամանքները չեն ներում: Հետագա հրատարակությունների մասին կլինի ծանուցում յուր ժամանակին, իսկ առայժմ կամենում ենք ավելի բարեհաջող պայմանների մեջ շարունակել մեր ձեռնարկությունը:

Տպագրական և ուրիշ մի քանի հանգամանքների պատճառով չկարողացանք պահպանել նյութերի պարզ ու պատշաճ դասավորությունը, ուստի և խնդրում ենք ընթերցողների ներողամտությունը²⁷»:

Ամբողջովին նվիրվելով գրահրատարակչական գործին, արդեն այդ ժամանակ Մ. Բարխուդարյանը լրջորեն մտածում էր սեփական տպարան հիմնելու և Օթոն Հերբեկի ծառայություններից հրաժարվելու մասին: Տարիների փայլաշատ իր երազանքի մասին նա տեղեկացնում է Հովհ. Հովհաննիսյանին և առաջարկում է համալսարանից գործակցել այդ գործում: Հովհաննիսյանը ողջունում է ընկերոջ այդ միտքը. «Սկստի՛չ ջան, քո դիտավորությունը Մոսկվայում տպարան և վիճակագրատուն ունենալը և հրատարակչական գործ սկսելը, խոսք չկա, որ գովելի է և ես համոզված եմ, որ քո հատուկ եռանդն ու հաստատականությունը գործը զուլիս կրենեն, միայն կարծում եմ, որ հեշտ գործ չէ և մի մարդու գործ՝ չէ, եթե դա իմ հասկացած ընդարձակ ծրագրով մի գործունեությունն ալիսի լինի ... իմ աշխատակցությունը անպակաս կլինի, քանի ես կենդանի եմ, միայն չես իմանում, թե որքան կարոտ եմ ազատ ժամանակի²⁸»: Այս մամակը գրված է 1889 թ-ին: Մոտ երկուսուկես տարի անց, 1891 թ.-ին իրականություն է դառնում Սկրտիչ Բարխուդարյանի ցանկությունը: Ըստ երևույթի իր կնոջ՝ Զրիստինե Բարխուդարյանի միջոցներով նա մի տպարան է հիմնում, այստեղ շարունակում «Հանդես»-ի տպագրությունը և սկսում լայնածավալ գրահրատարակչական աշխատանք:

Վերադառնալով սակայն «Հանդես գրականական և պատմականին»: Ինը տարվա ընթացքում (1888-1890 և 1894-1896) լույս տեսան հանդեսի յոթ գրքեր 2500 էջ ընդհանուր ծավալով: Ըա՛ս է, թե քիչ: Անվիճելի է, որ «Հանդեսը» հայ գրահրատարակչական գործի պատմության մեջ ունեցել է իր ուրույն տեղը: Ժամանակի հասարակության մեջ նրա բարձր համարումը առաջին հերթին պայմանավորված է եղել այն շոշափելի ծառայությամբ, որը մատուցվել է գրականությանը, հայագիտությանը և հրապարակախոսությանը:

Խորհրդային պատմագրական գիտության զարգացման ընթացքում միայն մեկ հետազոտող՝ պրոֆ. Արշալույս Արշարունին է, որ փորձել է վերլուծել «Հանդեսի» տեղն ու դերը ազգային մշակույթի մեջ: Եվ ահա թե ինչնում է նա տեսել հիմնական առանձնահատկություններն ու նշանակությունը: Փորձենք խմբավորել նրա գնահատականները:

- Սկրտիչ Բարխուդարյանն իր առջև խնդիր էր դրել «Հանդեսը» դարձնել համազգային պարբերական: Որոշակի իմաստով դա Միքայիլ Կազմովից: Տարեգրքում լույս տեսան Պերճ Պոռշյանի, Ռաֆայել Պատկանյանի, Լեոյի, Հակոբ Պարոնյանի, Նորայր Բյուզանդացու, Բաֆթու, Ղազարոս Աղայանի, Վրթանես Փափազյանի, Ալեքսանդր Ծատուրյանի և ազգային այլ նշանավոր գրող-բանաստեղծների երկերը:

- «Հանդեսը» խնդիր էր դրել գրական և պատմական հարցեր լուսաբանելու: Հրատարակվեցին ինքնուրույն գրական գործեր (թե՛ գրական լեզվով և թե՛ բարբառներով), քաղաքական չափածո, արձակ և դրամատիկական ստեղծագործություններ, գրականագիտական աշխատություններ (որոնցից ամենանշանակալին էին Միքայել Նալբանդյանի «Մոս և Վարդիթեր» Պերճ Պոռշյանի, և Երվանդ Շահազիզի «Միքայել Նալբանդյան» ծավալուն, հիմնարար ուսումնասիրությունները) գրական ժառանգության նյութերի (օրինակ Ստեփաննոս Նազարյանիցի նամակները)։

- «Հանդեսն» իր շուրջը համախմբեց ոչ միայն աշխատակիցներին և բարեկամներին (Ստեփան Մամիկոնյան, Ալեքսանդր Ծատուրյան, Հովհաննես Հովհաննիսյան), այլև ընդհանրապես բանիմաց, եռանդուն ձործիչների²⁹։

- Հանդեսը հայ ընթերցողին ծանոթացրեց ուս և արևմտյան նշանավոր գրողների՝ Լեոնտոսովի, Շեղերի-նի, Պետեֆիի, Նաբոկովի, Բայրոնի, Հայնեի, Մոպսսանի, Ֆրուգի և այլոց ստեղծագործություններին:

- Հանդեսը բանաստեղծներ Հովհաննես Հովհաննիսյանի և Ալեքսանդր Ծատուրյանի, գրականագետներ Երվանդ Շահազիզի և Գևորգ Չուբարի ինքնաբերական ասպարեզը դարձավ:

²⁷ «Հանդես գրական և պատմական». Գիրք 2, 1889. Մոսկվա, էջ 336:

²⁸ (Նամակ) Սկրտիչ Բարխուդարյանին, Հովհաննես Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, հատոր էջ 65-66:

²⁹ Ա. Արշարունին օրինակ է բերում Պետրոս Աղայանին, որի ստեղծագործություններից բոլոր տարիների ընթացքում «Հանդեսում» տպագրվել են չորս ինքնուրույն բանաստեղծություններ, մեկ քաղաքական բանաստեղծություն ուսերենից, մեկ հեղինակային վեպ և մեկ գրականական նրա աշխատության մասին: Տե՛ս Ա. Արշարունի. նշվ. աշխ. էջ 166-168.

- Արշարունու գնահատմամբ հանդեսի մեծագույն ծառայություններից է եղել Միքայել Նալբանդյանի նկատմամբ որդեգրած վերաբերմունքը, ինչն արտահայտվել է նախ և առաջ նրանում, որ այստեղ առանց սահմանափակվելու հրապարակվել են Մ. Նալբանդյանի անտիպ մինչ այդ անհայտ գործերը:

- Կարևորվել է այն հանգամանքը, որ խմբագիր-հրատարակիչ Սկրտիչ Բարխուդարյանը իր պարբերականի շուրջը համախմբեց հայ գրողներից բոլոր նրանց, ովքեր անկախ իրենց գրական և տեսական խմբավորումների հետ կապ ունենալու հանգամանքից, ցանկություն են հայտնում միասնական ուժերով զարգացնելու հայ գրականությունը: Անվանի գրողներից Ղազարոս Աղայանը, Պերճ Պոռշյանը, Մմբառ Շահազիզը, Գևորգ Պոռշյանը, Ռաֆայել Պատկանյանը, երիտասարդներից՝ Նար-Դուռը, Լեոն, Լ. Մանվելյանը, Մ. Արեղյանը, Ա. Զոլիկանին, Պ. Աղամյանը և Գ. Չուբարը արձագանքեցին Սկրտիչ Բարխուդարյանի ձեռնարկին, մասնակցեցին «Հանդեսին»: Ընդ որում, նման ընդգրկումը վկայում էր Սկրտիչ Բարխուդարյանի ոչ թե սկզբունքներից, քան «Հանդեսին»: Ընդ որում, նման ընդգրկումը տեսանկյուն չունենալու, այլ թերևս ընդհակառակը՝ լայնախոհության և հանդուրժողականության մասին³⁰:

Արշալույս Արշարունու այս գնահատականները մենք կիսում ենք: Մյուս կողմից. 15 էջ վերլուծելով ու գնահատելով «Հանդեսը»՝ մեծավաստակ ուսումնասիրողը նույնիսկ այստեղ «Հանդեսի» դժվարություններում և անհաջողություններում ցարական գրաքննության ճնշման ու հալածանքների հետևանքը տեսնելու ջանքեր է գործադրել: Մասնավորապես Արշարունին ակնարկում է, թե գրաքննությունն էր պատճառը, որ Մ. Բարխուդարյանը չկարողացավ խոստացածի պես տարին երկու անգամ «Հանդեսի» գրքերը հրապարակել: Բայց ոչ Բարխուդարյանի արխիվում, ոչ նրա ընդարձակ նամակագրության մեջ չի գտնվում ոչ ուղղակի, ոչ էլ անուղղակի ակնարկ այդ խաչընդոտի մասին:

Այնպես որ այդ փաստարկը հիմնավոր չէ: Բանն այն չէ, թե ցարական գրաքննությունը մի բացառիկ վերաբերմունք ուներ Սկրտիչ Բարխուդարյանի հանդեպ: Հայտնի է, որ Պետերբուրգի գրաքննչական կոմիտեի հայերեն հրատարակությունների գրաքննիչ Նիկողայոս Մառը ամձնական չերմ հարաբերություններ ուներ թե՛ Բարխուդարյանի, թե՛ Հովհաննիսյանի հետ: Բայց չկա որևէ հիմք պնդելու, թե Մ. Բարխուդարյանը երբևէ ձեռնարկել է որևէ գործ, որ հակասեր գրաքննչական կանոններին:

Սկրտիչ Բարխուդարյանի գրահրատարակչական գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա հաջողությամբ է համատեղել առաջադիմական-լուսավորչական գաղափարները ձեռնարկատիրական գործունեության հետ: 30 տարվա գրահրատարակչական գործունեության (1888-1918թթ.) ամենաաշխույժ և ազգային հասարակական ու մշակութային կյանքում ներդրման առումով ամենաակնառու շրջանը առաջին տասնհինգամյակն է եղել, որի ընթացքում էլ նա արժատական-հեղափոխական հայացքներին տուրք չի տվել:

Բարխուդարյանի տպարանը աշխատանքի առաջին տասնամյակի ընթացքում բացի «Հանդեսի» համարներից լույս է ընծայել ավելի քան հարյուր անուն գրքեր՝ ու բրոշյուրներ, ընդ որում թե՛ հայերեն, թե՛ ռուսերեն լեզուներով: Մեր ձեռքին են եղել հայերեն համարյա բոլոր հրատարակությունները, նաև որոշ ռուսերեն հրատարակություններ: Դրանց ծանոթանալիս՝ անմիջապես այք է զարնում այն, որ իր ժամանակակից ռուս առաջադեմ գրահրատարակիչների նման Սկրտիչ Բարխուդարյանը ոչ թե կենտրոնացել է ինչ-որ մի ուղղության, այլ հրատարակել է օգտակար գիտելիքների տարածմանը նպաստող ընթերցող ամենալայն շրջաններին ուղղված գրքեր:

Հակառակ այն հանգամանքին, որ այստեղից լույս տեսնող հրատարակությունները աչքի էին ընկնում պոլիգրաֆիական արտակարգ որակով, տպարանի աշխատանքի առաջին տարիները դժվարին էին և փորձություններով լի: Տարիների փորձով իմաստացած Ղազարոս Աղայանը սովորեցնում էր իր երիտասարդ ընկերոջը. «Հրատարակչությունը մի տեսակ վաճառականություն է, Գուլամիդյանց և նմաները, որոնք իրանց կոչմանը ծառայում են ամեն կարելի եղած հնարներով, այնքան մեղադրելի չեն, որքան մենք, որ և ուզում ենք բան հրատարակել, և խորշում ենք այն հնարներից, որ դրա համար գործ դնել անհրաժեշտ է: Այսպես են սովորեցրել ժողովրդին, մեծի մեր դանդաղկոտությամբ չենք կարող այդ հանգամանքի առաջն առնել և արդարացնել մեզ իդեալական ձգտումներով, որ իսկապես մեր սրտումը չէ, քանի որ սրտով ցանկանում ենք, որ հազարավոր բաժանորդներ ունենանք, միայն թե այդ լինի ինքն իրան, կամուրջ: ... Զ՛, պետք է գրել ամեն տեղ, պետք է դիմել ... նույնիսկ հարազատներին, որոնք ինքնաբերաբար բան անելու տրամադրություն չունին ... Օ՛հ ուրեմն, ի գործ, և նոր հոգով: Հայացքը բուն գործի վրա - սխալ է, պետք է շուկես: Ի նկատի պետք է ունենաս, որ հայ ընթերցող հասարակությունը, ինչպես և ուսում ստացող միայն հայ հաճախորդը չէ, այլ առավել ռուսի և սրա ուսումնարանն է մտնում, նրա տպածն է կարդում, իսկ իրանը մասամբ առ հարկի, մասամբ ամռնից և ստիճալամբ է ընդունում: Ցանկանում է ազատ լինել, բայց ստրկությունը գերադասում է: որովհետև ազատություն ձեռք բերելու համար աշխատանք, ջանք , փող և զոհաբերություն է պահանջում³¹: Հովհաննես Հովհաննիսյանը 1893 թ-ին գրում է ընկերոջը. «...Շատ վշտացա, որ կարդացի նամակիդ այն տողերը, թե գործդ լավ չի գնում, ի՞նչ է պատահել, ինչի՞ վրա ես մոլորվել, արդյոք շուտափույթ ելք չունի՞ս ի նկատի:

Սկրտիչ ջա՛ն, մի բան եմ ուզում հարցնել, չծիծաղես վրաս, հնարավորություն չկա՞ տպարանդ այստեղ (Թիֆլիս - Ա.Ս.) փոխադրելու: Բանն այն է, որ ես արդեն համոզվեցա, որ քո տպարանի պես մաքուր տպագրող մի արևեստանոց այստեղ ամենահաջող գոծունեության ասպարեզ կարող է ունենալ, այստեղի տպարանները ընդունակ չեն քեզ նման մաքուր և սիրուն բան դուրս բերել: Ես այդ մասին այստեղ ամենքին ասում էլ եմ, գրում

³⁰ Տե՛ս Ա. Արշարունի. Մոսկվայի հայ մամուլը. Երևան 1971, էջ 164-177

³¹ (Նամակ) Մ. Բարխուդարյանին, Ղազարոս Աղայան, Երկերի ժողովածու, Երևան 1963, հատոր 4, էջ 519-520:

ել են: Այս երկու տարվա ընթացքում «Արձագանքի» մեջ ինչ-որ քո տպարանից դուրս եկած բան է եղել, ես եմ քննել ու միշտ հիշատակել եմ առանձնապես տպագրության գեղեցկությունը³²»:

Բարխուդարյանի տպագրությունների բարձր որակը դժվարությամբ, բայց ընդունել են մաս Թիֆլիսի հայ հրատարակչական ընկերության անդամները (չմոռանա՛նք, որ նրանք «սնունդ էին» բացառապես քիֆլիսյան հրատարակիչներին): 1892 թ-ին նրան է հատկացվում մեծահարուստ Իզմիրյանի հիմնած Սահակ - Մեսրոպյան մրցանակին արժանացած Արշակ Մեեր - Միրաբյանի «Հայաստանեայց եկեղեցին և բյուզանդական ժողովոց պարագայը» ուսումնասիրությունը տպագրելու իրավունքը:

Մ. Բարխուդարյանը նաև մի քանի համարձակ հրատարակչական ծրագրեր է իրագործել: Օրինակ, 1889-ին բանակցություններ է սկսել Խաչատուր Աբովյանի որդու՝ Վարդանի հետ «Հանդեսում» մեծ գրողի ստեղծագործությունները տպագրելու համար: Խմբագիրը նկատի ուներ ոչ միայն «Վերք Հայաստանին», այլև «Պարսպ վախտի խաղալիքը», «Նախաշավիղ կրթությանը», «Օվսանման», «Ջանգը» և այլ ստեղծագործություններ: Ընդ որում նպատակ կար տպագրելու և այն հատվածներն ու պարբերությունները, որոնք ժամանակին հանել էր գրաքննությունը: Չեռագրերից ոմանք կորած լինելու և շատ այլ պատճառներով գործը ձգձգվում է և միայն 1895 թ. կրկին տեղից շարժվում: Վարդան Աբովյանի հետ վերջիվերջո պայմանավորվածություն է ձևեր բերվում Խաչատուր Աբովյանի երկերը ընտիր հրատարակությամբ 3600 օրինակ տպագրելու հարցում: Գիրքը լույս է տեսնում Իսահակ Ժամհարյանի ծախսով, 1897 թվականին³³:

Կամ՝ 1892-93 թվականներին Բարխուդարյանը վստահորեն շարունակում է Ս. Պետերբուրգի հայ ուսանողների հրատարակությունների շարքը, որոնք թե՛ բալկանյան ժողովուրդների ազատագրությունը, թե՛ թյուրքահայերի կյանքը նկարագրող մատչելի և էժամացիմ պատմվածքներով նպատակ ունեին ընթերցողների շրջանում հայերենասիրական զգացումներ արթնացնել³⁴։

Մկրտիչ Բարխուդարյանի տպարանի հետ է կապված դարավերջին Մոսկվայում պարբերական հրատա-
րակություն ստեղծելու երկու փորձ, երկուսն էլ անհաջող:

Առաջինը ձեռնարկեց նրա հորեղբորորդին՝ Հովհաննես Բաբխուդարյանը 1892 թ-ին, հրատարակելով «Մանկավարժական գրադարան» շարքի առաջին հատորը։ Պետք է ասել, որ 1880+-ական թվականների երկրորդ կեսից սկսած արևելահայ հասարակական միտքը մեծացած ուշադրությամբ էր հետևում հայ երեխաների դպրոցական կրթության և դաստիարակության խնդիրներին։ Չնայած վերջին տասնամյակների ընթացքում անլուծվում էր դասագրքերի և դպրոցական ընթերցանության գրքերի հրատարակության հարցը, սակայն ժամանակի մտավորականների աչքում (Եվրոպայի, նաև Եվրոպական Ռուսաստանի վիճակի հետ համեմատության մեջ) լուսավորության վիճակն անմխիթար էր³⁵։ Սակայն արդեն հասունացել էր այն գիտակցությունը, որ թե՛ ջափոր փորձը փոխառելու մասնագիտական ուղղության խիստ կարիք ունեն։ «Մանկավարժական գրադա-

«Հառաջաբանում» Հովհ. Բաբխուդարյանը գրում էր, որ նպատակ ունի հրապարակելու դասական մանկավարժների կենսագրություններն ու ուսմունքը, նյութեր ժողովրդական լուսավորության և դպրոցի վերաբերյալ³⁶։ Առաջին գլխիցը որոշակի հաջողություն ունեցել է և հետք է թողել մեր մանկավարժության պատմության մեջ։ Մակայն մյուս ձեռնարկների նման (որոնք Ռուսաստանում և Օսմանյան կայսրությունում ձեռնարկվել են բազմիցս) այն անհաջողությամբ ընդհատվեց, իսկ Հովհաննես Բաբխուդարյանն էլ դրանից հետո զուտ արհեստագործական գործով չի զբաղվում։

Երկրորդ փորձը ձեռնարկեցին Սիմեոն և Հովհաննես Շահնագարյանները 1897 թ-ին, սկսելով «Նոր փորձ» գրական-հասարակական հանդեսի հրատարակումը: «Հայաշաբանի փոխարեն» հոդվածում խմբագիր նույնիսկ «հասարակության հայելին» լինելով, արտացոլում է իր մեջ այն ամենն, ինչով կյանքն է ապրում ու ցով կյանքն է կառավարվում: Չիք կառավարվող առաջադիմություն առանց քննադատական ճյուղի: Չկա կրի-մեջ առանց դեկավարի: Գրականության աճելու, զարգանալու, առաջադիմելու առաջին և զիսավոր պայմանը կրիտիկան է:

Մեր աղքատիկ գրականության ոչնչությունը նամանավանդ զգացվում է կրիտիկայի ճյուղի մեջ: Մեր վեմաշխարհային հռչակ վայելել- բայց նրանք էլ ունեն և անցյալ, և ներկա... Իսկ մեր կրիտիկան...

Մենք ոչ ունեցել ենք երբևիցե կրիտիկոսներ, բառիս բուն նշանակությամբ, ոչ էլ այժմ ունենք, այսինքն՝ այնպիսի գրականներ, որոնք ինչպես Բելինսկի, Դոբրոլյուբով, Պիսարև, Պաբլիսկի, իրենց լիովին մպիրած լի-

³² Հովհաննես Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, Երևան, 1968, հ.4, էջ 110:

³³ ԳԱԹ, Մկրտիչ Բարխատարյանի ֆոնդ. գործ 3, էջ 5:

³⁴ Այդպիսի հրատարակություններից էին. Պատավ Տոնկա 1893, Վ. Փալիպալյան «Մասունցի Օհան» (Թուրքահայերի կյանքից) 1892, Ղայքազանց Միքելը (Ղազի Մոլլի արշավանքներից) 1893 և այլն:

³⁵ Տե՛ս, Լևոն Սարգսյան «Ժողովրդի կրթության գործը» թե՛

³⁶ «Մանկավարժական գրադարան», Մոսկվա, 1892 թ. էջ 5-6:

մեն կրիտիկային: Կրիտիկական հոդվածներ», «քննադատություններ» երբեմն առաջ եղել են մեզ մոտ, ճիշտ է, բայց դրանց մի մասը «հոդվածներ» չեն, այլ հասարակ գրախոսականին մոտեցող նկատողություններ, մյուս մասն էլ՝ քեպեկո և հոդվածներ են, բայց գուրկ չկողայից և գրված են առանց որևէ նախասկառյապստության:

Մեր ժողովածուի առաջին և գլխավոր-բայց, ոչ - միակ նպատակն է հարստացնել մայրենի գրականությունը կրիտիկական գրվածքներով: Մակայն թող չերևակայի ընթերցողն, որ այդ գրվածքները լինելու են անպայման կատարելագործված, դա անիրագործելի մի պահանջ է: Անպայման ընտիր և անպայման կատարելագործված կրիտիկան իսկի ռուս ժամանակակից գրականությունը չի տալիս, մի գրականություն, որ մեր հետ համեմատած՝ ահազին մի հսկա է,- էլ ուր մնաց, որ մերը տա: Մենք կդնենք մեր բոլոր ջանքերը հեաաքրքիր անելու հոգվածներն օրվա «այրոդ» հարցերի մասին խոսելով, մույնպես և կաշխատենք, որ այդ հոգվածները լինեն նախապատրաստված:

«Գրականը եթե չի ուզում, որ նրա գրվածքը կարդան և խսկոյն մոռանան, պիտի նախքան գրիչ ձեռքն առնելը՝ նախապատրաստվի»: Նվիրելով ընթերցողին կրիտիկական գրվածքներ՝ մենք միևնույն ժամանակ ականատես չենք առնիլ գրականության մյուս ճյուղերը: Մեր ժողովածուի մեջ մենք տեղ կստանք և՛ բելետրիստիկային, և՛ գիտական աշխատություններին: Այդ ուժերը կարծում ենք կնպաստեն հայ ընթերցողի զարգանալուն, նրա հոգեկան և մտավոր ըզոնակությունների աճել-մեծանալուն³⁷»:

128 էջանոց միակ համարի մանրագինն ուսումնասիրությունը Արշալույս Արշարունուն ստիպել է եզրակացնել, որ հանդեսի ոչ գրականագիտական, ոչ զրաբնադատական և ոչ էլ բարոյախոգեբանական զրվածքները, հակառակ համաշաբրանի ամպագորգոտ հայտարարությունների և հետապնդած նպատակների, էական հասարակական արժեք չեն ներկայացրել³⁸։ Գրական - քննադատական հանդես ստեղծելու այս առաջին փորձը ստ երևույթին վերոհիշյալ պատճառներով ընդունելություն չստացավ ընթերցողների շրջանում և շարունակություն չունեցավ։

[illegible]

9) զնախառնամբ սա լուրջ ներդրում էր ուսական ֆիզիոլոգիական գիտության ամփարնդում :

³⁷ «Նորո լիտոգ». Մոսկվա, 1897, էջ 1-4:

38 Տե՛ս. Լ. Լուսաւորուի Դրօսիկայի իսկ մամուլը, Երևան 1955, էջ 177-181:

³⁹ II Հանգիստացույցը ինքիսկ հրատարակություններն էլ արել Սևրաթի Բարխուդարյանը մայրամասում։ «Յոթյոթամյակ-
Տեմ. Ա. Արշալույսի, Մոսկվայի առջ. համագործակցության» (1900)։ «Դասը դասունգին ճեղհապահությւն»

[illegible][illegible]

(1899), «Դպրացիա աշակերտներին» (1899), «Մարդասիրության և աշխատանքի արժիք և գնահիշելը» (1901)

Շահնազարյանի «Ամենդ զսիրը» (1899), «Շաիր-11»

40 Կային: Ս. Բարխուդարյանի հետ նույն տարածում ավարտել էր Սոսկվայի

ՀԼՈՆ ՄԱՐԳԱՅԱՆԸ ՆՈՒՅՆԱԿԵՆ ԳՈՐԾԱՆԻ ԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԵՐՈՒՄԸ 1895-1900 ՔԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՆՈՒՄԸ ԷՐ ԼԱՉԱՐՅԱՆ ՃԵՆՈՐԱՆՈՒՄԸ: ՀԵՏԱ-

Լուսնարտարանի բնագիտական ֆակուլտետով, 1925-1927 թթ. և 1928-1930 թթ. Ստեփանակերտի լուսնարտարանում, 1905-1907 թթ. եղել է «Մարծ» ամսագրի խմբագիրը, իսկ 1921-22 թթ. Ստեփանակերտի լուսնարտարանի ղեկավարը։

Գայում գրադվել է գիտական կարծանքն աշխատանքի վրա:

Քր. Պարսկաստանում խորհրդային Հայաստանի առաջին համաշխարհային պատերազմից հետո ստեղծվել են մի քանի պատմություններ և կատակերգության ձևով գրված բնույթի վեպեր, որոնցում ներկայացվել են մի քանի պատմություններ և կատակերգության ձևով գրված բնույթի վեպեր:

⁴¹ Մկրտիչ Բարխուդարյանի արխիվում պահպանվել են Վ. Բաբայանի հետ զրահային խմբի մասին զեկերի մեծ քանակություն, որոնցից մեծ մասը վերաբերում էր Բաբայանի և Մկրտիչի հարաբերություններին, որոնք սակայն լույս չեն տեսել (Տե՛ս ԳԱԹ Մկրտիչ Բարխուդարյանի արխիվը)։

դատություններ Գ. Արծրյանու և Նշահակյանների դեմ, որոնք ստեղծվել էին 1992 թ. 11-12-ին:

Ֆոնդ. 604 ս-ձ. 605):

⁴² Տե՛ր. Բժ. Ս. Հախնազարյան «Երեցփոխանության ուղիքը Մոսկվայում. (1855)», 1977, հ. 1, էջ 119-120:

97թ. Խոստեղական պարարը (1900), Ն.Մելիք Թումանյան «Սշնիկ» և «Շիր Բար»։ 1900-1901 թթ. Խոստեղական պարարը (1900), Ն.Մելիք Թումանյան «Սշնիկ» և «Շիր Բար»։ 1900-1901 թթ.

(1894). 11-6. Изучение «*Հին ցուլ*» (1900) և այլն: ...воздуха при различных состояниях животного организма.

⁴³ С. И. ... По вопросу о колебаниях температуры выдыхаемого воздуха при различных состояниях организма. М.: "Наука и время" Москва 1982, стр. 32-33.

С. Шагинян. По вопросу о классификации... М. Бархударова 1891/г. Цит. по: Ш. Ш. Шагинян "Человек и время", Москва 1964, стр. 32-33.

Այսպիսով, անվիճելի է, որ XIX դարի վերջին Ռուսաստանյակում Սյրաի Բարխուդարյանի ապարանն էր Մոսկվայում հայ գրահրատարակության կենտրոնն ու խառնազույն օջախը։ Մոսկվայի հայ գիրքը այդ տարիներին լույս էր տեսնում մեծ Օթոն Հերբեկի և Վարվառե Գառնուկի տպարաններից։ Դիշտ է, լույս տեսած բոլոր հայերեն հրատարակությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միջին հաշվով 1-2 տարում այստեղ լույս էր տեսնում մեկ գիրք։

Մոսկվայի 1898 թվականին Օթոն Հերբեկի տպարանից լույս է տեսել մի հրատարակություն, որը շատ նշանակալից երևույթ էր Մոսկվայի հայ գրահրատարակչական պատմության մեջ և ամբողջովին դուրս է մնացել հետազոտողների տեսադաշտից։

Խոսքը Ջոն Մոյուարս Միլի «Ազատության մասին» աշխատության հայերեն թարգմանության մասին է։ Նախ ինչու՞մ է գրքի բացառիկ հետաքրքրությունը։ Շապկի ճակատին տպագրված է՝ «Հրատարակություն Մ.Գ.Ը.»։ Պարզ է, որ հասկանալի է նշանակում է «Մոսկվայի գրական ընկերություն»։ Ուրեմն դարավերջում մոսկվաբնակ հայ մտավորականների մի խումբ գոհ է արել մի նոր գրական ընկերություն ստեղծելու։ Ընկերությունն իր ծրագիրը այսպես է ներկայացրել վերոհիշյալ հրատարակությանը կցված «Ազդում»։ Ի նկատի ունենալով, որ մեր գրականության մեջ պակասում են այնպիսի հրատարակություններ, որոնք կարողանային զարգացնել մեր հասարակության մեջ գիտակցական և քննադատական վերաբերմունք դեպի մարդկային կյանքի այլալուստ հասարակական երևույթները և տարածել մեր մեջ հիմնավոր կերպով բացատրված հասկացություններ այնպիսի սկզբունքների մասին, ինչպես են օրինակ մարքի և քննադատության ազատությունը, անհատական ազատությունը, կանանց էմանսիպացիան, կրոնական համբերությունը, մի խոսքով այնպիսի գաղափարների մասին, որոնք ազատամիտ աշխարհայեցողության կիմունքներն են համարվում - մենք ձեռնարկեցինք հրատարակել այս ուղղությամբ մի քանի գրքեր։

Մեր այդ ձեռնարկության վրա հրավիրում ենք մեր ընթերցող հասարակության բարեհաճ ուշադրությունն ու աջակցությունը։

Այդ հրատարակությունների շարքը սկսվում է Մոյուարս Միլի «Ազատության մասին» տրակտատի և պարոն Տեր-Ավետիսյանի «Ժողանդիայի դատը» գրվածքի տպագրությամբ⁴⁴։

«Ազդը» ընթերցողներին տեղեկացնում է մեկ, որ տպագրության համար պատրաստ են մոյն Ջ. Մ. Միլի «Կանանց ստորադասության մասին», Ալեքսիս դը Տոկվիլի «Հին կարգ», Վոլտերի «Կանոնը» աշխատությունները։

«Ազդը» գրվել է 1897 թվականի հուլիսի 30-ին Մոսկվայում։ Այն փաստորեն Մոսկվայի գրական այս նոր ընկերության հռչակագիրն է։ Միանգամից ասենք, որ ընկերության գործունեության մասին արխիվային փաստաթղթեր մեզ էլ չի հաջողվել գտնել։ «Ազդում» նշված հրատարակության համար պատրաստ մյուս աշխատություններն էլ լույս չեն տեսել։ Հետևաբար ընկերության աշխատանքն էլ ընդհատվել և շարունակություն չի ունեցել։

Մոսկվայի հասարակական մարքի զարգացման պատմության մասում ընկերության գործունեության այս աղբյուրի արգասիքն իսկ հետաքրքրություն է ներկայացնում։ Ի՞նչ էին հրատարակել և ի՞նչ էին պատրաստվում հրատարակել «Մ.Գ.Ը.» ստեղծողները։ Այլ կերպ ասած՝ ի՞նչու այդ հեղինակների և հասկանալի այդ աշխատությունները։ Որովհետև այդ հարցերի պատասխանն արդեն որոշակի լույս է սփռում այն գաղափարների վրա, որի կրողն էին միության անդամները։

Անգլիացի նշանավոր փիլիսոփա, բարոյագետ և անտեսագիր Ջոն Մոյուարս Միլը (1806-1873) պահպանողական ու կարծաքանդ հասարակության քննադատն ու հակառակորդն էր, ժողովրդավարական ազատությունների կողմնակիցն ու զարգացման ջատագովը։ Նրա այդ հայացքները տեղ էին գտել 1859 թ. Լոնդոնում լույս տեսած "On Liberty" («Ազատության մասին») աշխատությունում։ 1862 թ. Լոնդոնում եղած ժամանակ այդ գրքին ծանոթացել էր Միքայիլ Նալբանդյանը, որի «Երկրագործությունն իբրև ուղիղ ճանապարհ» երկում հետևյալ հոդվածը կա Միլի ուսումնասիրությանը. «Ամեն մարդ գիտե, որ գրառությունը ազատ է այնպիսի (Անգլիայում - Ա.Ս.) և կառավարության, և օրենքի կողմից ամենայն հարձակմունք անհնարին։ Բայց, չնայելով սրա վերա, Մոյուարս Միլը հարկադրվեցավ հրատարակել յուր գրքույկը "On Liberty": Մոյուարս Միլը այս գրքի մեջ բնական պատճառներով աշխատում է համոզել, որ տպագրությունն ազատ մնա ամենայն հարձակումներից; Հարձակմունք, տպագրության ընդդեմ, և մի աշխարհում, ուր ամենայն բան տպվում է առանց արգելքի, ուրիշ կողմից արդյոք, մինչև կառավարությունը և օրենքը ազդեցություն չունին այս խնդրի վերա։ Մոյուարս Միլը խոսում է հասարակության հետ։ Նա բողոքում է նորա ընդդեմ, և նորա ընդդեմ դարձյալ պաշտպանում և բարոքում է տպագրության անպայման ազատությունը։

Հասարակությունը և նրա կանխակալ կարծիքները, նորա ավանդությունները, որ դարերով մտել են նրա ուղեղի վերա, արմատաշեղ են նորա ուղեղի մեջ, շատ անգամ չէ կարող հաշտ աչքով մայել ազատ հրապարակախոսության երեսին։ Նա հալածում է նորան ոչ թե օրենքով, կամ որևիցե կառավարչական ուժով կամ արգելքով, ո՛չ, մալավ գիտե, որ սոքա անհնարին բաներ են Անգլիոյ մեջ, մա հալածում է մանր հնարներով և աղտոտ ճանապարհներով, որոնց մեջ վերջին տեղը չունին անձնական վնաս հասցնել, վատաբանել, կասկածներ հարուցանել, հեղինակների վրա պարզամիտների միայքը և ատելությունը գրգռել նորա ընդդեմ։ Այս բոլորը սարսափներով տեսավ Մոյուար Միլը, տեսավ և գոչեց. «մենք սուգանում ենք»⁴⁵։

Հայտնի է, որ Փարիզում տպագրված «Երկրագործության» առաջին խմբագրանակը Ռուսաստան հասնելուն պես բռնագրավվում է և գրաքննության նպատակով փոխանցվում Արաքին գործերի նախարարության։

⁴⁴ Ջ. Մ. Միլ. Ազատության մասին, Մոսկվա, 1897, էջ 1-4։

⁴⁵ Մ. Նալբանդյան. Երկեր, Երևան, 1985 թ., էջ 473։

Նախարարության թարգմանիչ-գրաբնիչ (դրագոման) Ասկարխանովն իր գրախոսականում աշխատությունը որակում էր իբրև արտակարգ փասեղավոր և պետության ու կառավարության հիմքերը խաբխրող⁴⁶։

Ջոն Մոյուարս Միլի փիլիսոփայական երկերին ուս առաջադեմ ընթերցողը ծանոթ էր Ն. Շեռնիշևսկու թարգմանությամբ և քննական վերլուծություններից⁴⁷։

«Ազատության մասին» աշխատությունը սակայն ընդհուպ մինչև 1917 թ-ը ուսերեն թարգմանությամբ լույս չտեսավ։ Այսպիսով «Մ.Գ.Ը.» չանբերով հայ ընթերցողը այդ աշխատությանը ամբողջությամբ մայրենի լեզվով չտալ շուտ կարողացավ ծանոթանալ։ Եվ այն էլ ցարական գրաքննության պայմանակալում։ «Երոնիշյալ «Ազդը» հավաստում էր, որ շուտով կիրառարակվի մոյն հեղինակի կանանց ստորադասության մասին աշխատությունը, որը թարգմանված պետք է լիներ անգլերենից։ Այն այդպես էլ լույս չտեսավ (մեզ անհայտ պատճառներով), իսկ ուսերեն թարգմանությամբ առաջին և միակ անգամը լույս տեսավ 1906 թ-ին Պետերբուրգում։

Ի՞նչ էին ներկայացնում տպագրության համար նախատեսված մյուս երկու հրատարակությունները։ Ֆրանսիացի նշանավոր մտածող, խորհրդարանի պատգամավոր, արտգործնախարար, գրող և քաղաքագետ Ալեքսիս դը Տոկվիլի «Հին կարգ և հեղափոխություն» գիրքը, որը ֆրանսերեն լույս էր տեսել 1856 թ-ին, բացահայտում էր հին ֆեոդալական և նոր բուրժուական կարգի հաջորդականությունը։ Հեղինակը պնդում էր, որ ֆեոդալական կարգերի վերացումը հնարավոր էր մեկ առանց հեղափոխության։ «Մոսկվայի գրական ընկերությունը» Տոկվիլի գրքի վերնագրից հանել էր «և հեղափոխություն» բառերը՝ ըստ ամենայնի վախենալով, որ թեկուզ միայն դա գրաքննության կողմից արգելքի պատճառ կարող է դառնալ։ Վերջապես Վոլտերի համբախյալ «Կանոնիկ կամ լավաստություն» աշխատությունը զովերգում էր մարդկային կյանքի վեհությունը, քաղաքում էր չվախենալ և չերկնջել մոյնիսկ ամենաապստիկի դժվարություններից։ Այսպիսով ընթերցողներին ենք թողնում վերոհիշյալ փաստերի համադրությունը, պատճառով կարող ենք ասել, որ ի՞նչ հայացքների տեր էին «Մ.Գ.Ը.» անդամները։

Ավարտելով Մոսկվայում հայ գրահրատարակչական գործի այս ուսումնասիրությունը, շեշտենք, որ այն պետք է մայել «Պետերբուրգում հայ տպագրության զարգացման հետ ամբողջության մեջ, որովհետև մի շարք պատճառներով դրանք փոխկապակցված էին, երբեմն միմյանց շարունակող և լրացնող, և հայ հասարակական, դարավերջում մեկ՝ քաղաքական մարքի զարգացման վրա իրենց ազդեցությամբ մեկ ամբողջական դեր ունեին։

Մոսկվայի հայ տպագրությունը շարունակվեց մեկ քանի տարի դարում և որոշակի աշխատություն ապրեց Ռուսաստանում քաղաքական բռնա իրադարձությունների ազդեցությամբ։

САФАРЯН А. В. — Армянское книгоиздание в Москве в 1866-1900 годах. После упразднения в 1866 году типографии Лазаревского института восточных языков издание армянских книг и периодики осуществлялось в московских типографиях В. Готье, О. Гербека, В. Гатцук и Е. Кудрявцевой. Правительственные издания 80-х годов предоставляют новый историко-ведческий материал исследованию характера и направлений армянского книгоиздания, связанного с этими типографиями.

Результаты русско-турецкой войны 1877-78 гг. стали причиной активизации и развития армянской национальной освободительной мысли. С начала 80-х годов в Москве оформились национальные группы и кружки, преследующие как политические ("Союз патриотов"), так и культурно-просветительские ("Литературное общество московских армянских студентов" и "Литературное общество Москвы") задачи. Их издательская деятельность внесла существенный вклад в общественно-политическую и культурную жизнь армянского народа.

Впервые исследуется первая, наиболее плодотворная половина книгоиздательской деятельности Мкртыча Бархударова, в частности его "Литературно-исторические сборники".

Прсветительское и национально-прогрессивное направление его издательской продукции стало определяющим в армянском книгоиздании Москвы. Вокруг М. Бархударяна сплотились видные представители московской и кавказской армянской интеллигенции. Некоторые из них также оставили свой след в истории книгоиздательского дела России второй половины XIX века.

⁴⁶ Տե՛ս, Շ. Արշակ. Армянская печать и царская цензура, Ереван, 1957, стр. 224-225

⁴⁷ Дж. С. Милл. Основание политической экономии, т. 1-2, СПб., 1865, 1874.